


Վրաստանի կառավարություն

Պետական միջգերատեսչական հանձնաժողով

Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմ



Քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և 2016 թվականի գործնական պլանի կատարման հաշվետվություն

Փետրվար, 2017 թվական

**Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական
նախարարի աշխատակազմ**

Հասցե. Թբիլիսի, 0134, Գ.Լեոնիձե փ. N°3/5

Հեռախոս. (+995 32) 2923299; (+995 32) 2922632

Կայք-էջ. www.smr.gov.ge

Էլ.-փոստ. elisolomidze@yahoo.com

<u>Ներածություն</u>	4
I. Հավասար և լիարժեք մասնակցություն քաղաքացիական և քաղաքական կյանքին.....	6
Աջակցություն սակավաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնություններին.....	6
Գենդերային ուղղորդում.....	8
Պետական վարչարարության, իրավապահ մարմինների և մեխանիզմների մատչելիության աճ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար.....	10
Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների համար հավասար ընտրական միջավայրի ապահովում.....	14
Մեդիայի և լրատվության մատչելիություն	19
II. Հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և հնարավորությունների ստեղծում	21
Սոցիալական շարժունություն.....	21
Ենթակառուցյի վերականգնում	21
III. Որակյալ կրթության մատչելիության ապահովում և պետական լեզվի իմացության բարելավում.....	23
Բարձրագույն կրթության մատչելիության աճ.....	26
Մասնագիտական և չափահասների կրթության ապահովում	27
Աջակցություն պետական լեզվի ուսուցման բարելավմանը	31
IV. Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանում և հանդուրժողական միջավայրի խրախուսում.....	34
V. Եվրոինտեգրման գործընթացի մասին տեղեկատվական/գիտակցության բարձրացման ընթացակարգ	42
VI. Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի կողմից իրականացված գործունեություն.....	43
VII. Միջազգային պարտականությունների կատարում.....	45

Ներածություն

Էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ պետական քաղաքականության իրականացման կարևոր գործիք է ներկայացնում Վրաստանի կառավարության կողմից 2015 թվականի օգոստոսի 17-ի թիվ 1740 կարգադրությամբ հաստատված «Քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարությունը և 2015-2020 թթ. գործնական պլանը»: Ռազմավարությունը հենվում է հավասարության սկզբունքի և «Առավել բազմերանգություն, առավել ինտեգրում» մոտեցման վրա և նպատակամղված է հավասար միջավայրի ձևավորմանը, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում էթնիկ փոքրամասնությունների լիարժեք համամասնակցությանը, նրանց մշակույթի և ինքնության պաշտպանությանը:

2016 թվականի ընթացքում շարունակվեց քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարության իմպլեմենտացիայի՝ իրականացման գործընթացը: Պետական նախարարի աշխատակազմի համակարգմամբ պետական ռազմավարության և գործնական պլանի արդյունավետ իրականացման նպատակով ստեղծված պետական միջգերատեսչական հանձնաժողովը գործունեությունը շարունակեց ռազմավարությամբ սահմանված հետևյալ հիմնական նպատակներին հասնելու համար.

- Հավասար և լիարժեք մասնակցություն քաղաքացիական և քաղաքական կյանքին,
- Հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և հնարավորությունների ստեղծում,
- Որակյալ կրթության մատչելիության ապահովում և պետական լեզվի իմացության բարելավում,
- Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանում և հանդուրժողական միջավայրի ապահովում:

Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի ղեկավարությունը և պատասխանատու աշխատակիցները, ինչպես նաև պետական հիմնարկությունների, նախարարությունների և կազմակերպությունների, ք .Թբիլիսիի մունիցիպալիտետի (տեղական իշխանության) Սակրեբուլոյի (Ժողովրդական ժողովի) և Էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջանների «պետական լիազոր-նահանգապետի վարչության» ներկայացուցիչները, մասնավորապես.

- Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմը,
- Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը,
- Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարությունը,
- Վրաստանի աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարությունը,
- Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցյի նախարարությունը,
- Վրաստանի արդարադատության նախարարությունը,

- Վրաստանի սպորտի և երիտասարդության գործերի նախարարությունը,
- Վրաստանի ներքին գործերի նախարարությունը,
- ՀԻԻԱ-Վրաստանի ներքին գործերի նախարարության Ոստիկանության ակադեմիան,
- Վրաստանի պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարությունը,
- Վրաստանի գյուղատնտեսության նախարարությունը,
- Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմը,
- Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը,
- Ք.Թբիլիսիի մունիցիպալիտետի Սակրեբուլոն,
- Ք.Բաթումի քաղաքապետարանը,
- Քվեմո Քարթլիի պետական լիազոր-նահանգապետի վարչությունը,
- Սամցխե-Ջավախեթի պետական լիազոր-նահանգապետի վարչությունը,
- Կախեթի պետական լիազոր-նահանգապետի վարչությունը,
- Վրաստանի հանրային հաղորդումը,
- ՀԻԻԱ-Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնը,
- ՀԻԻԱ-Գնահատման և քննությունների ազգային կենտրոնը,
- ՀԻԻԱ-Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցը,
- ՀԻԻԱ-Դավիթ Աղմաշենեբեղիի անվան Վրաստանի ազգային պաշտպանության ակադեմիան,
- Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանը,

Հաշվետու ժամանակաշրջանում անցկացվեցին հանձնաժողովի նիստեր Թբիլիսիում և տարածաշրջաններում, աշխատանքային հանդիպումներ, թեմատիկ բանավեճեր և խորհրդատվություններ, մշակվեցին հանձնարարականներ: Միաժամանակ հանձնաժողովում ներկայացված համապատասխան հաստատությունների հետ համագործակցությամբ, պատրաստվեցին 2015 թվականի գործունեության կատարման հաշվետվությունը և 2016 թվականի գործնական պլանը: Պատրաստված հաշվետվությունները ներկայացվեցին կառավարությանը, ինչպես նաև Ժողովրդական պաշտպանի աշխատակազմին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդին և քաղաքացիական սեկտորին, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին, փորձագետներին: Բացի դրանից, գործունեություն ծավալվեց հանձնաժողովի շրջանակներում ձևավորված թեմատիկ աշխատանքային խմբերում: Թեմատիկ աշխատանքային խմբերի հանդիպումներում տարբեր կարևոր հարցերի քննարկմանը ակտիվ մասնակցություն ունեցան ոչկառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները, փորձագետները, ինչպես նաև այս ոլորտում աշխատող այլ շահագրգիռ ակտորներ: Հաշվետու ժամանակաշրջանում հատկապես ակտիվ էր աշխատանքային գործընթացը «Մեդիայի և լրատվության մատչելիության» և «Սակավաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնությունների» թեմատիկ խմբերում:

Տարվա ընթացքում գործունեությունն իրականացվեց տարբեր ուղղություններով: Առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց որակյալ կրթության մատչելիության

ապահովմանը և պետական լեզվի իմացության մակարդակի բարելավմանը, ինչը քաղաքացիական ինտեգրման գործընթացի կարևոր գործիքն է:

I. Հավասար և լիարժեք մասնակցություն քաղաքացիական և քաղաքական կյանքին

Նշված միջանկյալ նպատակների և խնդիրների կատարման համար կոնկրետ ծրագրեր/նախագծեր և միջոցառումներ իրականացրեցին. Վրաստանի Արդարադատության և Ներքին գործերի նախարարությունները, Պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարությունը, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, Վրաստանի հանրային հաղորդումը, Վրաստանի Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը, ինչպես նաև էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջանների պետական լիազոր-նահանգապետերի վարչությունները:

Աջակցություն սակավաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնություններին

Գնչուների հաշվառում

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվեց գնչուների հաշվառման գործընթացը, որի իրականացումը մեկնարկել և ընթանում է 2011 թվականից Վրաստանի *Արդարադատության նախարարության* ՀԻԻԱ պետական սերվիսների զարգացման գործակալության կողմից՝ «Նորամուծությունների և բարեփոխումների կենտրոն» ոչկառավարական կազմակերպության հետ համագործակցությամբ: Անցկացվեցին համապատասխան ընթացակարգեր ծննդյան և քաղաքացիության գրանցումների, ինչպես նաև Անձը հաստատող վկայական տալու հետ կապված հարցերի կարգավորման նպատակով:

Գնչուների հաշվառման 2011-2016 թվականների վիճակագրական տվյալները

Գործավարության տեսակը	Ընդհանուր գումար	Ավարտվեց գործավարությունը	Գործավարությունը շարունակվում է
Քաղաքացիության սահմանում	14	14	0
Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ	16	14	2
Ծննդյան փաստ	37	37	0
Ընդամենը.	67	65	2

Հաշվետու ժամանակաշրջանում պետական միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում «Սակավաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնություններին աջակցության» նպատակով ստեղծված աշխատանքային խմբում ակտիվորեն ընթանում էր աշխատանք: Առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց Վրաստանում բնակվող գնչուների համայնքի իրավիճակին, նրանց հիմնախնդիրների քննարկմանը և լուծման ուղիների որոնմանը:

Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը սակավաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ իրականացրեց հետևյալ ակտիվությունները.

- «Սոցիալական ինկլյուզիայի (ներառման) աջակցության ենթածրագրի» շրջանակներում պլանավորվեցին և անցկացվեցին տարբեր միջոցառումներ, որոնց նպատակն էր ինկլյուզիոն (ներառման) ուսուցման համար ստեղծել համապատասխան միջավայր,
- Միջազգային մակարդակով ստանձնած պարտականություններին համապատասխան, գնչուների մշակույթի պահպանության և ինքնագոյի պաշտպանության նպատակով մշակվեց վարժանք-մոդուլ, ինչը դեռահասների մոտ աճեցրեց գնչուների նկատմամբ ընդունելի վերաբերմունք, պլանավորվեցին հանդիպումներ, պատրաստվեցին կոնֆերանսային շնորհանդեսներ,
- 2016 թվականի տվյալներով հանրային դպրոցներում սովորում է 225 գնչու դեռահաս: Ենթածրագրի ակտիվությունները ասմունքի և թատերական ակումբներում գնչուներին և տեղական հասակակիցներին միավորեց ընդհանուր հետաքրքրության շուրջ,
- Ենթածրագրին միացած հանրային դպրոցներում անցկացվեցին միջոցառումներ, որոնց նպատակն էր գնչուների նկատմամբ ստեղծել բարյացակամ միջավայր,
- Կրթության և գիտության նախարարության աջակցությամբ ք.Բաթումիում բնակվող գնչու դեռահասը (ս.ա.) սկսեց սովորել մասնագիտական կրթության տարրական աստիճանին: Բազային կրթությունն ավարտելուց հետո, այլընտրական քննություններով նա ընդունվեց Բաթումի «Բլեքսի» մասնագիտական քոլեջը: Առ այսօր գնչու պատանին հաջողությամբ տիրապետում է համակարգչային ցանցերի և համակարգերի վարչարարության ծրագիրը:

Հաշվետու ժամանակաընթացքում առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց սակավաթիվ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների լեզվական իրավունքների պաշտպանությանը: Վրաստանի կրթության և գիտության նախարարի թիվ 1255 հրամանագրով սահմանվեցին դպրոցներ/դասարաններ, որտեղ արմատավորվեց սակավաթիվ էթնիկ փոքրամասնություններին հետևյալ լեզուների ուսուցումը. օսերեն, ավարերեն, ուդայերեն, ասոբերեն, քրդերեն: Մասնավորապես.

- Օսական լեզու՝ Ղվարելի մունիցիպալիտետի գյուղ Ծիծկանաանթսերի հանրային դպրոցի I-IX, Լագոդեխի մունիցիպալիտետի Փոնի և Արեշփերանի գյուղերի հանրային դպրոցների I-XII դասարաններում,
- Ավարական լեզու՝ Ղվարելի մունիցիպալիտետի Թիվի, Չանտլիսղուրի և Սառուսո գյուղերի հանրային դպրոցների I-IX դասարաններում,

- Ուղական լեզու՝ Ղվարելի մունիցիպալիտետի Զինոբիանի գյուղի հանրային դպրոցի I-VI դասարաններում,
- Ասորական լեզու՝ Մցխեթայի մունիցիպալիտետի Չվելի Քանդա գյուղի հանրային դպրոցի VI-XI դասարաններում,
- Քրդերեն՝ Կրթության և գիտության նախարարի հրամանագրով որոշվեց ք. Թբիլիսիի թիվ 79 հանրային դպրոցում:

Նախարարի 2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 702 հրամանագրով փոփոխություն մտցվեց վերը նշված թիվ 1255 հրամանում և առաջին կետին ավելացավ "3" (վ) ենթակետը, որով սահմանվեց որպես ընտրովի առարկա շաբաթական երկժամյա հագեցվածությամբ չեչնական լեզվի ուսուցումը Ախմետայի մունիցիպալիտետի հետևյալ գյուղերում. Օմալոյի, Դուխի, Դումաստուրիի, Բիրկիանիի և Ջողոլոյի հանրային դպրոցների V-VI դասարաններում:

Գենդերային մեխանիզմներ

Քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարությունը և համապատասխան գործնական պլանը նկատառում է արմատախիլ անել գենդերային նշանով անհավասարությունը և օժանդակել կանանց իրավունքների պաշտպանությանը, աջակցել և խրախուսել հասարակական կյանքում նրանց ակտիվ մասնակցությանը:

Այս նպատակով էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում *Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի* կազմակերպմամբ անցկացվեցին տեղեկատվական բնույթի տարբեր թեմատիկ հանդիպումներ: Հանդիպումների ժամանակ ուշադրությունը կենտրոնացած էր գենդերային հավասարության հարցերի վրա, ներառյալ վաղ ամուսնությունները: Բացի դրանից, պետական նախարարի աշխատակազմի և Վրաստանում գործող Խաղաղության հիմնադրամի կազմակերպմամբ, ք. Ախալցխի մունիցիպալիտետի քաղաքապետարանում անցկացվեց վարժանք թեմայով. «Կանանց իրավունքները և ընդգրկվածությունը»: Ք.Գարդաբանիում տեղի ուսուցիչների հետ անցկացվեց չորս հանդիպում կանանց ընդգրկվածության և հասարակական կյանքում նրանց ակտիվ մասնակցության մասին:

Իսկ Արդարադատության նախարարության ընդգրկմամբ, Մառնեուլիի մունիցիպալիտետի Սադախլո գյուղի հասարակական կենտրոնում կայացավ հանդիպում տեղի բնակչության հետ մարդկանց վաճառքի, ընտանիքում բռնության և էթնիկ փոքրամասնությունների պաշտպանության հարցերի կապակցությամբ:

Այս ուղղությամբ *Թբիլիսիի մունիցիպալիտետի Սակրեբուլոյի (Ժողովրդական ժողով) կողմից* իրականացվեցին շատ միջոցառումներ, այդ թվում.

- Մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական ինտեգրման հանձնաժողովի նախաձեռնությամբ, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության (USAID) և ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) աջակցությամբ, Թբիլիսիում բնակվող էթնիկ փոքրամասնությունների

ներկայացուցիչների համար անցկացվեց վարժանք «Գենդերային հավասարություն, կանանց քաղաքական մասնակցություն» թեմայով,

- «Թբիլիսիի բարեկամության տանը» անցկացվեց կոնֆերանս «Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց ընդգրկվածությունը ք.Թբիլիսիի մունիցիպալիտետի գործունեությունում» թեմայով: Կոնֆերանսում քննարկվեցին գենդերային հավասարության ռազմավարության հետ կապված հարցերը և մշակվեցին կոնկրետ հանձնարարականներ:

ՀԻԻԱ Դավիթ Աղմաշենբեկիի անվան Վրաստանի ազգային պաշտպանության ակադեմիան, ազգային գործնական պլանի շրջանակներում, 2011 թվականից սկսեց գենդերային հավասարության սկզբունքների և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի արմատավորումը ուսումնական պլանում: Ազգային պաշտպանության ակադեմիայի, ինչպես բակալավրիատի, այնպես էլ կարիերային դպրոցների ուսումնական պլանի համաձայն, դպրոցներ ընդունված յուրաքանչյուր նոր հերթափոխի, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների, անց են կացվում ուսուցումներ «Գենդերային հավասարության սկզբունքները և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը» թեմայով: 2013 թվականից գենդերային հավասարության սկզբունքները և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը մտցվեցին ազգային պաշտպանության ակադեմիայի դպրոցների համապատասխան ուսումնական պլանում: 2016 թվականից IV կուրսի յունկերների համար ուսումնական մոդուլում լրացուցիչ արմատավորվեց գենդերային հավասարության սկզբունքների գնահատման դասախոսություն (4 ժամ):

Հաշվետու ժամանակաընթացքում *Սշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարության կողմից*, USAID-ի ֆինանսավորմամբ, «Ընտանիքում բռնության կրճատումը Վրաստանում» նախագծի կանխարգելման բաղադրիչի շրջանակներում, ընտանիքում բռնության վերացման թեմայով պատրաստվեցին և տպագրվեցին բրոշյուրներ չորս լեզուներով (վրացերեն, ռուսերեն, հայերեն, անգլերեն – 500 օրինակ), բրոշյուրը ներառում է տեղեկատվություն բռնության ձևերի և զոհերին օգնության մեխանիզմի, պետական հիմնադրամի սպասարկման և դրանից շահառու բենեֆիցիարների մասին:

Բացի դրանից, տարվա ընթացքում նախարարության կազմակերպմամբ, Քվեմո Քարթլիի և Սամցխե Ջավախեթի տարածաշրջաններում կայացան տեղեկատվական հանդիպումներ հետևյալ թիրախային խմբերի հետ. Գարդաբանի մունիցիպալիտետի Մարտոդոփի և Մարթիճալա գյուղերի հանրային դպրոցի աշակերտների, Նինոծմինդայի մունիցիպալիտետի Գանձա և Մառնեուլի մունիցիպալիտետի Մադախլո գյուղերի բնակչության հետ:

Իսկ ք.Ախալքալաքում, ընտանիքում բռնության դեմ 16-օրյա քարոզարշավի շրջանակներում, բռնության մասին գիտակցության բարձրացման նպատակով կազմակերպվեց ակցիա: Համալսարանի ուսանողներին տրվեցին բրոշյուրներ, մայկաներ և պայուսակներ:

Քվեմո Քարթլիի տարածաշրջանի երկրամասային վարչության կողմից իրականացված գործունեություն

Քվեմո Քարթլիի տարածաշրջանի բոլոր մունիցիպալիտետներում ստեղծված է «Մունիցիպալային սերվիս» «Կանանց սենյակ», որի նպատակն է կանանց կարիքներին հարմարեցված ապահովել տեղեկատվության և սերվիսների մատչելիությունը: «Կանանց սենյակի» շրջանակներում իրականացվեց բնակչության համար կարևոր հարցերի քննարկում և հիմնախնդիրների լուծման ուղիների որոնում: Անցկացվեցին տեղեկատվական բնույթի հանդիպումներ վաղ ամուսնությունների, կանանց բռնության դեմ պայքարի մեխանիզմների և մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության կապակցությամբ:

Իրականացվեցին հետևյալ դասընթացները. տեղեկատվական տեխնոլոգիաների մեկամսյա դասընթաց, «Լիդեր և հաջողակ կանայք խորհրդարանում» վարժանք, անգլերեն լեզվի բազիսային եռամսյա դասընթաց և այլն: Հաշվետու ժամանակաընթացքում Քվեմո Քարթլիի տարածաշրջանում «Կանանց սենյակներ»-ի հովանավորությամբ իրականացվեց 35 միջոցառում, որոնց մասնակցեցին 200-ից ավելի տիկնայք:

Պետական վարչարարության, իրավապահ մարմինների և մեխանիզմների մատչելիության աճ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար Վրաստանի ներքին գործերի նախարարության գործունեություն.

Հաշվետու ժամանակաշրջանում Վրաստանի ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) ակադեմիան ակտիվորեն իրականացնում էր էթնիկ փոքրամասնությունների հավասարության պաշտպանության քաղաքականություն:

Ակադեմիայում գործում է տարբեր կրթական ծրագիր, այդ թվում. դետեկտիվ-քննիչների, ոստիկան-տեսուչների և թաղամասի տեսուչների պատրաստության հատուկ մասնագիտական կրթական ծրագիր, որը ներառում է «Ոստիկանությունը բազմազգ հասարակությունում» և «Գենդերային հավասարություն» թեման: 2016 թվականի իրավիճակով, վերը նշված ծրագրերը ուսուցանվեցին էթնիկ փոքրամասնությունների 35 ներկայացուցիչների (16 ադրբեջանցի, 15 հայ, 3 ուկրաինացի, 1 եզդի):

ՀԻԻԱ ՆԳՆ ակադեմիայում «Վրաց լեզվից պատրաստության հատուկ կրթական ծրագրին» ուսանողների ընդունելություն առաջին անգամ իրականացվեց 2016-2017 ուսումնական տարում (ընդունվեց 2 հայ և 4 ադրբեջանցի ուսանող):

Իրականացվեց «Իրավակարգապահության ապահովման և հանցագործության կանխման ծրագիր հանրային դպրոցների համար», ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման քարոզչություն՝ «Քո կյանքի, քո անվտանգության համար» շրջանակներում, ընդհանուր երկրի մասշտաբով հանրային դպրոցներում հայտարարվեց մրցույթ (նկարներ, էսսեներ) «Պաշտպանենք երթևեկության կանոնները միմյանց կյանքի համար» թեմայով:

Մրցույթին մասնակցում էին ինչպես վրացալեզու, այնպես էլ ոչվրացալեզու դպրոցների աշակերտները:

Մամցիսե-Չավախեթի տարածաշրջանի պետական լիազոր-նահանգապետի վարչության կողմից իրականացված գործունեություն.

Մամցիսե-Չավախեթի տարածաշրջանում հաշվետու ժամանակաշրջանում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների դիմումներին արձագանքն իրականացվում էր օրենքով սահմանված ընթացակարգերի պաշտպանությամբ: Համապատասխանաբար, քաղաքացիներին ցուցաբերվեց համարժեք օգնություն/խորհրդատվություն: Պետական լիազոր-նահանգապետը մշտապես հանդիպում էր բնակչությանը, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակվող մունիցիպալիտետներում՝ Նինոծմինդայում և Ախալքալաքում: Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար չեն ստեղծվել հիմնախնդիրներ պետական լեզվին չտիրապետելու պատճառով, նրանց մատուցվում էր համապատասխան բանավոր բացատրություն մայրենի կամ նրանց հասկանալի լեզվով:

Պետական լիազոր-նահանգապետի վարչությունում և մունիցիպալիտետներում գործում է «Մեկ լուսամուտի սկզբունքը»: Ցանկության դեպքում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները հանդիպում են համապատասխան ծառայությունների աշխատակիցներին: Նահանգապետի վարչությանը տարբեր կարիքների մասին խնդրագրով դիմեց 2076 քաղաքացի, որոնցից էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ էր 146-ը: Դիմումներում քաղաքացիները, չնայած իրենց ազգային պատկանելությանը, խնդրում էին սոցիալական օգնություն, փայտանյութի համար բնափայտի հատկացում, բուժման համար գումարներ: Փայտանյութի համար բնափայտի հատկացման թույլտվություն տրվել է էթնիկ փոքրամասնության 117 ներկայացուցչի:

Հաշվետու ժամանակաշրջանում նահանգապետի վարչության համապատասխան ծառայությունները ընդգրկված էին կենտրոնական հիմնարկությունների և ոչկառավարական սեկտորի կողմից կազմակերպված այն միջոցառումներին, որոնք իրականացվում են էթնիկ փոքրամասնությունների կարիքների բավարարման և նրանց քաղաքացիական ակտիվության աճի նպատակով: Մունիցիպալիտետներում կադրերի մրցութային ընտրության ժամանակ մրցակիցներն ունեն հնարավորություն թեստավորում անցնելու մայրենի լեզվով:

Քվեմո Քարթլիի տարածաշրջանում պետական լիազոր-նահանգապետի վարչության կողմից իրականացված գործունեություն.

Պետական լիազոր-նահանգապետի թիվ 61 կարգադրության հիման վրա ստեղծվեց էթնիկ փոքրամասնությունների հիմնադրույթների մասին խորհրդատվական խորհուրդ: Խորհրդի կազմի մեջ մտնում են պետական լիազոր-նահանգապետը, նահանգապետերի տեղակալները, Քվեմո Քարթլիի բոլոր մունիցիպալիտետների գամգեբելիները (շրջանային վարչությունների նախագահները) քաղաքապետը, ժողովրդական պաշտպանի և ոչկառավարական կազմակերպության ներկայացուցիչները: Հաշվետու ժամանակաշրջանում անցկացվեց երկու նիստ: Նիստերում քննարկվեցին էթնիկ

փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից նույնականացված հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները:

Քաղաքական որոշումների ընդունման գործընթացում էթնիկ փոքրամասնությունների մասնակցության խրախուսում

Թբիլիսիի Սակրեբուլոյի գործունեություն.

Թբիլիսիի մունիցիպալիտետի Սակրեբուլոյի մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական ինտեգրման հանձնաժողովը ստաժավորման ծրագրի կապակցությամբ պատշաճ տեղեկատվություն հղեց Վրաստանի կրթության և գիտության նախարարությանը: Նախարարության միջանկյալ պատասխանի համաձայն, տեղեկատվությունը փոխանցվեց բարձրագույն ուսումնական հաստատություններին:

Համայնքների ջանքերով գտնվեցին և ներկայումս ք.Թբիլիսիի մունիցիպալիտետի սակրեբուլոյում 3-ամսյա ստաժավորում են անցնում էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ հինգ առաջադեմ ուսանողներ: Ք.Թբիլիսիի քաղաքապետարանի մշակույթի քաղաքային ծառայությունում ստաժավորում անցավ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երկու անձ:

Կրթության հարցերով գիտակցության բարձրացում/տեղեկատվական հանդիպումներ

Վրաստանի կրթության և գիտության նախարարության գործունեություն

- Ընթացիկ տարվա հուլիսի 19-ին Շվեդիայի միջազգային զարգացման հիմնադրամի (SIDA) աջակցությամբ, Ալեքսանդրե Ռոնդելիի անվան ռազմավարության և միջազգային հարաբերությունների հետազոտության կենտրոնի կողմից ք.Ախալքալաքում կազմակերպեց հանրային բանավեճ-շնորհանդես կրթության համակարգում/նոր ուսումնական պլանում էթնիկ փոքրամասնությունների ընդգրկվածության հարցերով:
- Եվրախորհուրդ-Եվրամիության հետ համագործակցությամբ ստեղծվեց և լեզուների եվրոպական խարտիայով սահմանված Վրաստանի էթնիկ փոքրամասնությունների 13 լեզուներով թարգմանվեցին բուկլետներ փոքրամասնությունների լեզուների ուսումնառության և բիլինգվային կրթության նշանակության մասին: Բուկլետների ստեղծմանը-թարգմանությանը մասնակցում էին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները:
- Անցկացվեցին հանդիպումներ Սամցխե-Ջավախեթի, Քվեմո-Քարթլիի, Կախեթի, Սամեգրելոյի, Աջարիայի և ք.Քութաիսի ռեսուրս-կենտրոնների ներկայացուցիչների, ինչպես նաև դպրոցների ղեկավարության հետ պետական լեզուն և փոքրամասնությունների լեզուները սովորելու, նույնպես երկլեզու ուսումնական ծրագրերի թեմայով տեղեկատվություն մատուցելու նպատակով,

Հասարակական սերվիսների մատչելիության բարելավում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար

Վրաստանի պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարության կողմից իրականացված գործունեություն

Պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարության բոլոր տասնհինգ քրեա-կատարողական հիմնարկություններում հինգ լեզուներով (ռուսերեն, հայերեն, ադրբեջաներեն, թուրքերեն և անգլերեն) մատչելի են մեղադրյալ-դատապարտյալների իրավունքների մասին բրոշյուրները:

Պրոբացիոներների իրավունքների և պարտականությունների մասին հայերեն թարգմանվել է 800 տեղեկատվական բուկլետ, ադրբեջաներեն՝ 2000 օրինակ, իսկ ռուսերեն՝ 700 օրինակ:

Առաջին փուլում, պրոբացիոներների իրավունքների և պարտականությունների մասին թարգմանված բրոշյուրները փոխանցվեցին Քվեմո Քարթլիի պրոբացիայի բյուրոյին. ադրբեջաներեն՝ 500 օրինակ, ռուսերեն՝ 200 օրինակ: Սամցխե-Ջավախեթի պրոբացիայի բյուրոյին տրվեց 400 հայերեն, 200 ռուսերեն և 100 ադրբեջաներեն տեղեկատվական բուկլետ:

ՀԻԻԱ պատժա-կատարողական և պրոբացիայի ուսումնական կենտրոնում 2015 թվականի դեկտեմբերից ընթանում է նախարարության հատուկ քրեա-կատարողական ծառայության սպասավորների պարտադիր մասնագիտական պատրաստության, սերտիֆիկացման և պարբերական վերապատրաստման գործընթաց: Նշված նպատակով մշակվեցին ուսումնական ծրագրեր, որտեղ այլ հիմնական թեմաների հետ միասին նշանակալից ուշադրություն հատկացվեց մարդու իրավունքներին և հիմնական ազատություններին, կալանավորների հետ վերաբերմունքի չափորոշիչներին, հատկապես խոցելի կատեգորիաների (այդ թվում էթնիկ փոքրամասնությունների) հետ վերաբերմունքի յուրահատկությունների ուսուցմանը ինչպես ազգային օրենսդրության, այնպես էլ միջազգային կարգավորումների համաձայն:

2016 թվականի ընթացքում պատրաստություն/վերապատրաստություն անցան հատուկ քրեա-կատարողական ծառայության 2417 ունկնդիրներ, ինչպես հակախտրականության կարգավորման, այնպես էլ էթնիկ փոքրամասնություններին պատկանող մեղադրյալ/դատապարտյալների իրավունքների և նրանց հետ վերաբերմունքի առանձնահատկության հարցերով:

Թրեֆիկինգի դեմ պայքարի հարցերի մասին գիտակցության բարձրացում

2006 թվականից Վրաստանի Արդարադատության նախարարությունը ղեկավարում է մարդու վաճառքի (թրեֆիկինգի) դեմ ուղղված միջոցառումներ իրականացնող միջգերատեսչական համակարգող խորհուրդը:

Թրեֆիկինգի դեմ պայքարի պետական քաղաքականության մի կարևոր բաղադրիչ է ներկայացնում կանխման միջոցառումների իրականացումը: Այս տեսանկյունից առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում խոցելի խմբերին, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին: Հաշվետու ժամանակաշրջանում Վրաստանի Արդարադատության նախարարությունը էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարբեր տարածաշրջաններում անցկացրեց տեղեկատվական հանդիպումներ,

վարժանքներ, որոնք նվիրվեցին մարդու վաճառքի (թրեֆիկինգի) դեմ պայքարի պետական քաղաքականությանը, անօրեն գաղթի հարցերին և այս վտանգից պաշտպանության մեխանիզմներին: Տարածվեցին թրեֆիկինգի թեմայով հինգ լեզվով պատրաստված տեղեկատվական բրոշյուրներ (վրացերեն, անգլերեն, ռուսերեն, թուրքերեն և ադրբեջաներեն):

Հասարակական սերվիսների և ընթացիկ պետական ծրագրերի մասին տեղեկատվական նյութերի տարածում

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար հասարակական սերվիսների մատչելիության աճի նպատակով, 2016 թվականի ընթացքում Վրաստանի Արդարադատության նախարարությունը ապահովում էր հասարակական սերվիսների և ընթացիկ պետական ծրագրերի մասին տեղեկատվական նյութերի տարածումը էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջաններում, այդ թվում նաև նրանց հասկանալի լեզուներով: Նշված նյութերը տարածվեցին հասարակական կենտրոնների և Արդարադատության տների միջոցով (մեկ հասարակական կենտրոնում միջին հաշվով 80-100 բուկլետ):

Վրաստանի գյուղատնտեսության նախարարության կողմից հաշվետու ժամանակաշրջանում ադրբեջաներեն և հայերեն լեզուներով թարգմանվեց և հրատարակվեց «Գյուղատնտեսական կոոպերատիվի ուղեցույց» բրոշյուրը (ադրբեջաներեն 1500 օրինակ, հայերեն՝ 1500 օրինակ), որը էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում (Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլի, Կախեթի) տարածվեց գյուղատնտեսության նախարարության տեղեկատվական-խորհրդատվական ծառայությունների միջոցով:

Մարդու իրավունքների և դրանց պաշտպանության մեխանիզմների մասին էթնիկ փոքրամասնությունների գիտակցության բարձրացում

Վրաստանի Արդարադատության նախարարության ՀԻԻԱ Արդարադատության ուսումնական կենտրոնը 2016 թվականին իրականացնում էր «Քաղաքացիական հասարակության հզորացում» նախագիծը: Նախագծի նպատակն էր քաղաքացիական հասարակության ուժեղացումը, տարածաշրջանի բնակիչների իրավական գիտակցության բարձրացումը և անձնական/գործնական ունակությունների զարգացման աջակցությունը: Վերը նշված նախագծի շրջանակներում, երեք ամսվա ընթացքում Վրաստանի 33 հասարակական կենտրոններում (այդ թվում էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող գյուղեր) տեղական բնակիչների համար անվճար անցկացվեցին վարժանքներ ինչպես իրավական, այնպես էլ սոցիալական հարցերի կապակցությամբ: Վարժանքներին ներկա էր 5350 մասնակից:

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների համար հավասար ընտրական միջավայրի ապահովում

2016 թվականին անցկացված ընտրությունների¹ ժամանակ կարևոր էր էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար ընտրություններում ապահովել հավասար մասնակցություն: Այս ուղղությամբ ակտիվորեն շարունակում էր գործունեությունը *Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը* (ԿԸՀ), իրականացվեցին մի շարք միջոցառումներ.

Ընտրական ընթացակարգերի հետ կապված նյութերի թարգմանություն էթնիկ փոքրամասնությունների լեզուներով

- Հայալեզու և ադրբեջանալեզու ընտրողների համար թարգմանվեցին և տպագրվեցին հետևյալ ընտրական փաստաթղթերը. ընտրական քվեաթերթիկը, ընտրողների հուշաթերթը, քվեաթերթիկը լրացնելու կարգը, ընտրողների համընդհանուր ցուցակը (պատի և սեղանի), ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովում ձայն տալու ընթացակարգերն արտացոլող պատին փակցնելու պաստառ:
- Հայալեզու և ադրբեջանալեզու տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով թարգմանվեցին և տպագրվեցին հետևյալ ընտրական փաստաթղթերը. տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների հրահանգ-ձեռնարկը, հանձնաժողովի նախագահի հուշաթերթ հրահանգը, քվեարկության օրը ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի գործառույթները, տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի իրավասությունները, ընտրողներին գրանցող հանձնաժողովի անդամի գործառույթները, քվեատուփի և հատուկ ծրարների հանձնաժողովի վերահսկիչ անդամի գործառույթները և փոխադրական քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամի գործառույթները, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ուսումնական ֆիլմը «Քվեարկության օրվա ընթացակարգերը» սուբտիտրերով:

Վրաստանի խորհրդարանի 2016 թվականի հոկտեմբերի 8-ի ընտրությունների համար, ԿԸՀ-ն ընտրողներին համընդհանուր ցուցակում իրենց անձի և ընտանիքի անդամների տվյալների

¹2016 թվականին Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը անցկացրեց հետևյալ ընտրությունները. 2016 թվականի հունվարի 28-ին Գարդաբանի գամգեբելի արտահերթ ընտրությունները, 2016 թվականի մայիսի 22-ին սակրեբուլոնների միջանկյալ ընտրությունները, Վրաստանի խորհրդարանի 2016 թվականի հոկտեմբերի 8-ի ընտրությունները, ինքնակառավարվող քաղաք՝ Ախալցխեի քաղաքապետի և ինքնակառավարվող համայնքների՝ Բոլնիսի, Խարագաուլի, Ճիաթուրայի, Ջուգդիդի և Շալենջիխայի մունիցիպալիտետների գամգեբելիների 2016 թվականի հոկտեմբերի 8-ի արտահերթ ընտրությունները, քաղաք Թբիլիսիի, Շավկայի, Ճիաթուրայի, Աբաշայի և քաղաք Ջուգդիդի մունիցիպալիտետների սակրեբուլոնների 2016 թվականի հոկտեմբերի 8-ի միջանկյալ ընտրությունները, Լագոդեխի և Սենակի մունիցիպալիտետների սակրեբուլոնների 2016 թվականի հոկտեմբերի 30-ի միջանկյալ ընտրությունները:

վերստուգման նոր սերվիս առաջարկեց: ԿԸՀ-ի պաշտոնական կայք-էջին (voters.cec.gov.ge) տեղադրվեց ընտրողների համընդհանուր ցուցակի ֆոտո-լուսանկարային էլեկտրոնային տարբերակը (գործակալության տվյալների էլեկտրոնային բազայում գոյություն ունեցող մոտակա ֆոտո-լուսանկարը թվային ձևաչափով), որտեղ յուրաքանչյուր ընտրողին տրվեց իր անձը և ընտանիքի անդամների տվյալները վերստուգելու հնարավորություն: Նշանակալից է, որ ցուցակում տվյալները ստուգելիս օգտատերերը նույնպես ստանում էին լրատվություն ընտրական տեղամասի տեղադրության վայրի մասին: Էթնիկ փոքրամասնություններով հոծ տարածաշրջաններում բնակվող հայալեզու և ադրբեջանալեզու ընտրողները համընդհանուր ցուցակի որոնման համակարգով (voters.cec.gov.ge) ԿԸՀ-ի պաշտոնական կայք-էջից օգտվել կարող էին հայերեն և ադրբեջաներեն լեզուներով:

Ընտրողները, նույնպես հնարավորություն ունեին ընտրողների համընդհանուր ցուցակում սեփական անձի և ընտանիքի անդամների տվյալները վերստուգել Վրաստանի զանգվածով տեղադրված 7000 շտապ ցատկի տերմինալի միջոցով: Հատկանշական է, որ ընտրողների համընդհանուր ցուցակի հանրային տարբերակը առաջին անգամ տեղադրվեց շտապ ցատկի տերմինալներում 2016 թվականի խորհրդարանական ընտրությունների համար, ինչը ընտրողներին ապահովեց ավելի մատչելիությամբ և պարզեցված սերվիսով:

Նշված ուղղությամբ ԿԸՀ-ն սպառողներին առաջարկեց ևս մեկ նորույժ՝ հատուկ ապլիկացիայի միջոցով ցանկացած քաղաքացի «Անդրոիդ» համակարգին հարմարեցված բջջային հեռախոսի և/կամ պլանշետի կիրառմամբ, կարող էր ընտրողների համընդհանուր ցուցակում ստուգել սեփական անձը և ընտանիքի անդամների տվյալները և տեսնել որ ընտրական տեղամասում էր հաշվառված:

Բացի դրանից, ԿԸՀ-ի կողմից հաշվետու ժամանակաընթացքում ապահովված էր.

- ԿԸՀ-ի կողմից պատրաստված բոլոր տեղեկատվական-գովազդային տեսա հոլովակների տեղադրումը Հանրային հաղորդման և տարածաշրջանային հեռուստատեսության եթերում հայերեն և ադրբեջաներեն լեզուներով:
- Վրաստանի խորհրդարանի 2016 թվականի հոկտեմբերի 8-ի ընտրությունների համար, ԿԸՀ-ն ապահովեց հայալեզու «Վրաստան» թերթում և ադրբեջանալեզու «Գյուրջիստան» թերթում մատչելի սերվիսների և քվեարկության օրը ընտրողների ձայն տալու ընթացակարգերի մասին տեղեկատվության հրապարակումը:
- Վրաստանի խորհրդարանի 2016 թվականի հոկտեմբերի 8-ի ընտրությունների համար ԿԸՀ-ի հեռախոսային/տեղեկատվական կենտրոնի միջոցով, ընտրողները ընտրական հարցերի կապակցությամբ տեղեկատվություն ստանալ կարող էին հայերեն և ադրբեջաներեն լեզուներով, որտեղ զբաղված էին էթնիկ փոքրամասնությունների 4 երիտասարդ ներկայացուցիչներ (2 հայ, 2 ադրբեջանցի):

Փոքր դրամաշնորհների տրամադրում քաղաքացիական կազմակերպություններին և փոքրամասնությունների համայնքներին՝ ընտրությունների նշանակության մասին տեղեկատվական քարոզչություն վարելու և ընտրական մշակույթը հզորացնելու ուղիով»:

ԿԸՀ-ն դրամաշնորհային մրցույթի ֆինանսավորման գերակայող ուղղություն սահմանեց խոցելի խմբերի (այդ թվում էթնիկ փոքրամասնությունների) մասնակցության աջակցությունը 2016 թվականի հոկտեմբերի 8-ին անցկացվելիք Վրաստանի խորհրդարանի ընտրությունների գործընթացում: Դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի որոշման հիման վրա, նշված ուղղությամբ ուսուցման կենտրոնի կողմից ֆինանսավորվեց 8 տեղական ոչկառավարական կազմակերպության նախագիծ: Այստեղից 7 նախագծի թիրախային խումբ ներկայացնում էին էթնիկ փոքրամասնությունները, որոնց ընդհանուր բյուջեն կազմեց 199 377 լարի: Իսկ 1 նախագծի թիրախային խումբը ներկայացնում էին ինչպես էթնիկ փոքրամասնությունները, այնպես էլ սահմանափակ կարողություններով անձինք: Նշված նախագծի բյուջեն կազմեց 27 790 լարի: Հատկանշական է, որ նախագծերի իրականացման աշխարհագրական տեսադաշտը լրիվությամբ ներառում էր էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջանները:

Էթնիկ փոքրամասնություններին պատկանող ընտրական վարչության անդամների նախապատրաստումը ընտրական ընթացակարգերի կապակցությամբ

Վրաստանի խորհրդարանի 2016 թվականի հոկտեմբերի 8-ի ընտրությունների համար Վրաստանի զանգվածով, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողներով հոծ բնակվող 12 ընտրատարածքներում ստեղծվել էր 344 ընտրատեղամաս (վրաց-ադրբեջանական՝ 207 տեղամաս, վրաց-հայկական՝ 133 տեղամաս, վրաց-հայկական-ադրբեջանական՝ 4 տեղամաս): Վրաստանի զանգվածով, վարժանքներ անցկացվեցին ընտրատեղամասային հանձնաժողովի 47 341 անդամի, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների 2714 ներկայացուցչի (այստեղից՝ հայ-1 343, ադրբեջանցի – 1 338, օս – 13, ռուս – 12, ավարացի – 7, ուկրաինացի – 1) համար:

Վրաստանի խորհրդարանի 2016 թվականի հոկտեմբերի 8-ի ընտրությունների համար մշակված վարժանքների հայեցակարգին համապատասխան, ընտրատեղամասային հանձնաժողովների հայալեզու և ադրբեջանալեզու անդամներն անցան ինտենսիվ ուսումնական դասընթաց: Վարժանքների I փուլում ընտրատեղամասային հանձնաժողովների անդամներին անցկացվեցին հրահանգավորում ընտրատեղամասային հանձնաժողովի ղեկավար անձանց ընտրության կարգի կապակցությամբ: Վարժանքների II փուլը տրամադրվեց ընտրատեղամասային հանձնաժողովների ընդհանուր կազմի ուսուցմանը, որի շրջանակներում քննարկվեցին մինչև քվեարկության օրը և քվեարկության օրվա ընտրատեղամասային հանձնաժողովի իրավասությանը պատկանող հարցերը: Վարժանքների III փուլը հատկացվեց ընտրատեղամասային հանձնաժողովների ղեկավար անձանց (նախագահ, տեղակալ, քարտուղար) ուսուցմանը: Այս փուլի ուսումնական

ծրագիրը ներառում էր ընտրատեղամասային հանձնաժողովի ղեկավար անձանց իրավասությունների քննարկումը, ինչպես նաև ինտեգրված էին նորարարական ուսումնական մոդելները՝ հակամարտությունների վարում և ընտրությունների անվտանգություն, որը մշակեց ԿԸՀ-ի ուսումնական կենտրոնը, ԿԸՀ-ի և Ներքին գործերի նախարարության միջև ձևակերպված Հուշագրի շրջանակներում, Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) փորձագետի հանձնարարականներով և միջազգային փորձի ճանաչմամբ: Վարժանքների IV փուլում ընտրատեղամասային հանձնաժողովների անդամներին անցկացվեց սիմուլացիոն ուսուցում քվեարկության օրվա դրվագային ներկայացման ձևաչափով:

Էթնիկ փոքրամասնությունների ընտրողների կրթական ծրագրերի իրականացում

Հաշվետու ժամանակաշրջանում, էթնիկ փոքրամասնությունների ընտրողների կրթության ուղղությամբ իրականացվեցին հետևյալ նախագծերը. «Ընտրական զարգացման դպրոց», «Ընտրություններ և երիտասարդ ընտրող» և «Ընտրական վարչարարության դասընթացներ»:

Ընտրական զարգացման դպրոց

ԿԸՀ-ն և ուսուցման կենտրոնը, Եվրոպայի խորհրդի և Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) աջակցությամբ իրականացրեցին «Ընտրական զարգացման դպրոց-2016» տեղեկատվական-ուսումնական նախագիծը: Նախագծի նպատակն էր երիտասարդության շրջանում ժողովրդականացնել ընտրությունները, քաղաքացիական ընդգրկվածության աճը, զարգացնել մարզիչի ունակություն-հմտությունները ընտրատարածքային հանձնաժողովի անդամների համար և ընտրական վարչությունում կուտակված գիտելիքի կիսման ուղիով ստեղծել լրացուցիչ մարդկային ռեսուրս:

Ուսումնական դասընթացը ներառում էր հետևյալ հարցերը. պետության ինստիտուցիոն կառուցվածք, ընտրական համակարգերը Վրաստանում, ընտրությունների օրենսդրական կարգավորում, ընտրություններին ընդգրկված կողմեր, ընտրական միջավայրի ինկլյուզացում, գենդերը և ընտրությունները, ընտրական ցուցակներ, նախընտրական ժամանակաշրջան, քվեարկության ընթացակարգեր, ընտրական տեղամասերի փակում, քվեարկության արդյունքների ամփոփում և ընտրական վեճեր:

Նախագիծն իրականացվեց 20 մունիցիպալիտետում, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով բնակվող 4 մունիցիպալիտետում² և դրանց մասնակցեց 453 երիտասարդ: Այստեղից կին՝ 298 (65.78%) և տղամարդ՝ 155 (34.22%): Հատկանշական է, որ մասնակիցների շրջանում էթնիկ փոքրամասնության 7 ներկայացուցիչ էր, այդ թվում. կին՝ 5 (71.43%) և տղամարդ՝ 2 (28.57%):

² Նախագիծն իրականացվեց էթնիկ փոքրամասնություններով բնակվող հետևյալ մունիցիպալիտետներում. Գարդաբանի, Մառնեուլի, Թելավի և Ախալցխի:

Ընտրություններ և երիտասարդ ընտրող

ԿԸՀ-ն և Ուսուցման կենտրոնը Վրաստանի կրթության և գիտության նախարարության հետ համագործակցությամբ, Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) ֆինանսական աջակցությամբ, հանրային դպրոցներում իրականացրեց տեղեկատվական-ուսումնական նախագիծ՝ «Ընտրություններ և երիտասարդ ընտրող»: Ուսումնական դասընթացը ներառում էր հետևյալ հարցերը. ընտրությունների պատմական էքսկուրս և հաջորդականություն, ընտրություններ և ժողովրդավարություն, ընտրական վարչություն և ընտրող, ընտրություններին ընդգրկված այլ կողմեր:

Ուսումնական դասընթաց անցկացվեց 21 մունիցիպալիտետում (այդ թվում էթնիկ փոքրամասնություններով բնակվող 14 մունիցիպալիտետներում³ և 7 բարձրալեռ տարածաշրջանում) տեղաբաշխված 73 հանրային դպրոցի XI-XII դասարանների 1235 աշակերտների:

Ընտրական ադմինիստրատորի դասընթացներ

ԿԸՀ-ն և Ուսուցման կենտրոնը, Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) աջակցությամբ իրականացրեցին տեղեկատվական-ուսումնական նախագիծ «Ընտրական ադմինիստրատորի դասընթացներ»: Նախագծի նպատակը ներկայացնում էին ընտրական հարցերի կապակցությամբ քաղաքացիական գիտակցության բարձրացումը և ընտրական վարչությունում որակյալ կադրային ռեսուրսի ձևավորման աջակցությունը:

Ուսումնական դասընթացը ներառում էր հետևյալ հարցերը. մինչև քվեարկության սկսվելը անցկացվելիք ընթացակարգեր. քվեարկության գործընթաց, ընտրատեղամասի փակում, մինչև քվեատուփի բացումն անցկացվելիք ընթացակարգեր, ընտրական քվեատուփի բացում, մինչև քվեատուփի արդյունքներն հանրագումարող արձանագրության կազմումը անցկացվելիք ընթացակարգեր, քվեարկության արդյունքները հանրագումարող արձանագրության կազմում, Հանրագումարային արձանագրության հրապարակում, քվեարկության օրվա դիմում/բողոքներ:

Նախագիծն իրականացվեց Վրաստանի զանգվածով 22 մունիցիպալիտետում, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով բնակվող 11 մունիցիպալիտետում⁴: Ուսումնական դասընթացի շրջանակներում, ուսուցում անցավ 804 մասնակից, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով բնակվող մունիցիպալիտետներից 377 մասնակից:

Էթնիկ փոքրամասնությունների ընտրողների իրազեկման քարտզարշավ

Վրաստանի խորհրդարանի 2016 թվականի հոկտեմբերի 8-ի ընտրությունների համար, ԿԸՀ-ի և Ուսուցման կենտրոնի համագործակցությամբ, առաջին անգամ ըհրատարածքային

³ Նախագիծն իրականացվեց էթնիկ փոքրամասնություններով բնակվող հետևյալ մունիցիպալիտետներում. Մառնեուլի, Բոլնիսի, Դմանիսի, Թեթրիձորո, Գարդաբանի, Ռուսթավի, Ծալկա, Թելավի, Լագոդեխի, Մագարեջո, Սցխեթա, Ախալքալաքի, Նինոծմինդա, Ախալցխի:

⁴ Նախագիծն իրականացվեց էթնիկ փոքրամասնություններով բնակվող հետևյալ մունիցիպալիտետներում. Ախալքալաքի, Ախալցխի, Բոլնիսի, Գարդաբանի, Թեթրիձորո, Լագոդեխի, Մառնեուլի, Նինոծմինդա, Մագարեջո, Ծալկա, Դմանիսի:

հանձնաժողովների անդամների մասնակցությամբ անցկացվեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների իրազեկման քարտզարշավ, որի շրջանակներում կայացան ձայն տալու նմանակված ընթացակարգեր: Հայալեզու և ադրբեջանալեզու ընտրողների համար անցկացված նմանակված քվեարկության գործընթացը ծառայում էր նրանց ընտրական իրավունքների կատարյալ իրացման աջակցությանը:

Հանդիպումներ անցկացվեցին էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջանների (Սամցխե-Ջավախեթի, Կախեթի, Քվեմո Քարթլի) 53 գյուղերում:⁵

Մեղիայի և լրատվության մատչելիություն

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար լրատվամիջոցների և լրատվության մատչելիության բարելավում

Հաշվետու ժամանակաշրջանում **Հանրային հաղորդումն** իրականացրեց 2016 թվականի գործնական պլանով սահմանված միջոցառումներ:

Հեռուստահաղորդում

2016 թվականի օգոստոսի 22-ից սկսած, ամեն օր Հանրային հաղորդման գլխավոր լրատվական թողարկում «Մոսմբե» 18:00 և 20:00 ժամերին, որը զուգահեռ ռեժիմով տարածվում է նաև Երկրորդ ալիքի եթերում, հեռարձակվում է վրացերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզվով ձայնային շավիղների ուղեկցությամբ: Նշված նախագիծը «Հասկանալի լեզվով լրատվության մատչելիության բարելավում էթնիկ փոքրամասնությունների համար» տարածաշրջանային հաղորդումների ասոցիացիայի և Հանրային հաղորդման համատեղ նախագիծն է, որն իրականացվում է ԱՄՆ-ի դեսպանության աջակցությամբ:

Հանրային հաղորդումը հեռուստադիտողին առաջարկեց ամենօրյա թողարկում երեք լեզուներով (26 րոպե տևողությամբ), որը թողարկվում է Երկրորդ ալիքի եթերում (աբխազերեն լեզվով՝ 23:00 ժամին, օսերեն լեզվով՝ 23:30 ժամին, ռուսերեն լեզվով՝ 00:00 ժամին):

Վրաստանի պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարությունը քրեա-կատարողական հիմնարկություններին, տեխնիկապես հնարավոր լիմիտի (15 ալիք) շրջանակներում, բոլոր ազգությունների մեղադրյալ/դատապարտյալներին ապահովում է հետաքրքիր հեռուստատեսային ալիքների մատչելիություն: Բացի դրանից, նախարարությունն ապահովում է արբանյակային հաղորդումների մեջ անվճար մատչելի հեռուստատեսային ալիքների միացումը: Հարկավոր է նշել, որ քրեա-կատարողական

⁵ Հանդիպումներ անցկացվեցին հետևյալ շրջաններում և գյուղերում: Սագարեջոյի շրջան՝ Դուգազրամա, Քեշալո, Թուլարի, Լագոդեխի շրջան՝ Կաբալի, Ուզունթալա, Թելավի շրջան՝ Ղարաջալա, Գարդաբանի շրջան՝ Նագարլո, Քեսալո, Կալինինո, Բիրլիկի, Մառնեուլի շրջան՝ Ղիզիլաջո, Ալգեթի, Շահումյան, Բոլնիսի շրջան՝ Տալավերի, Նախիդուրի, Բոլնիսի, Ստ.Բոլնիսի, Դարբազի, Կիանեթի, Դմանիսի շրջան՝ Վերին Կարաբուլախի, Ամամլո, Կիզիլքիլիսա, Ծավկայի շրջան՝ Նարդևան, Այազմա, Դուշի, Արսարվանի, Չոլիանի, Թեջիսի, Խաչկովի, Կաբուրի, Չիվթքիլիսա, Թեթրիձղարոյի շրջան՝ Դուռնուկ, Դաղեթ, Մամշիլդե, Շիխիլո, Աղթակլիա, Ղարաթակլիա, Բորջոմի շրջան՝ Կոչիո, Ալաթումանի, Բեժանո, Ախալցխի շրջան՝ Աբաթխանի, Օիրա, Օուղորոթ, Փոքր Պամաճ, Օրալ, Դուլալիս, Սագել, Ախալքալաքի շրջան՝ Ախալքալաքի, Կուլիկամ, Դիլիսկա, Լինոմինդայի շրջան՝ Մեծ Արագյալ, Ջիգրաշեն:

հիմնարկություններում հեռուստատեսային ալիքների հաղորդումն իրականացվում է չորս լեզվով. վրացերեն, ռուսերեն, թուրքերեն և ադրբեջաներեն:

Ռադիոհաղորդում

Հաշվետու ժամանակաընթացքում շարունակվեց ամենշաբաթյա «Մեր Վրաստանը» ռադիո-հաղորդումը (տևողությունը՝ 40 րոպե): Հաղորդումը լուսաբանում է էթնիկ և կրոնական փոքրամասնությունների տոները, մշակութային առանձնահատկությունները, ավանդույթները, մարտահրավերները, էթնիկ և կրոնական փոքրամասնությունների իրավունքների խախտման փաստերը և քաղաքացիական ինտեգրման տեսակետից առկա բարդությունները,

2016 թվականի ընթացքում հայերեն և ադրբեջաներեն լեզուներով սինխրոն ձևով թարգմանված «Մոամբե»-ի թողարկումները ձայնագրվում էր ռադիոյի ստուդիայում և հաղորդվում էր Առաջին ռադիոյի էթերում, նույնպես Ռադիո 2-ի էթերում շարունակվեց քրդերեն լեզվով (տևողությունը՝ 25 րոպե) ամենշաբաթյա լրատվական-ճանաչողական-զվարճալի հաղորդումը:

Մպորտի և երիտասարդության գործերով նախարարությունը իրականացրեց նախագիծ՝ «Ուսուցում ռադիո ժուռնալիստիկայի և հաղորդակցության կառավարման մեջ»: Ծրագրի շրջանակներում իրականացվեց չորսամսյա ուսումնական ծրագիր ադրբեջանական (AGFM) և հայկական (VRASTAN-FM) ռադիոյում: Ուսումնական ծրագրի նպատակն էր էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների տեսական և գործնական ունակություն-հմտությունների տիրապետումը: Նախագծի շրջանակներում ռադիոյում աշխատանքի տեղավորվեց 5 հայ և 5 ադրբեջանցի երիտասարդ:

Ադրբեջանական ռադիո AGFM հեռարձակվում է հետևյալ տարածաշրջաններում. Մառնեուլի, Բոլնիսի, Դմանիսի, Թեթրիձղարո FM 101,5; Ռուսթավի, Գարդաբանի, Թբիլիսի , FM 100,6; Հայկական ռադիո VRASTAN FM հեռարձակվում է հետևյալ տարածաշրջաններում. Ախալքալաքի, Նինոծմինդա, Ախալցխիսե Fm106.2:

Էլեկտրոնային/տպագիր մեդիա

Հրատապ լրատվությունը ամենակարճ ժամանակում տարածելու համար, **Հանրային հաղորդման** հովանոցի ներքո գործարկվեց կայք-էջ հինգ լեզուներով. <http://multitolerant.gpb.ge/>, որոնք ներառում են (www.abkh.gpb.ge; www.os.gpb.ge; www.am.gpb.ge; www.az.gpb.ge; www.ru.gpb.ge) ենթա-կայք-էջերը: Բացի մոտակա լրատվությունից, կայք-էջերի վրա տեղադրված են հեռուստատեսության «Ոսկե ֆոնդում» պահպանվող հազվագյուտ արխիվային նյութերը բոլոր հինգ լեզուներով: Զուգահեռաբար, սոցիալական ցանցում ստեղծված է հինգ տարբեր լեզուներով էջ, որը առավել ինտերակտիվ է դարձնում ստեղծված արտադրանքը:

Հանրային հաղորդման, ինչպես ամբողջական հաղորդումները, այնպես էլ առանձին նորությունները և էքսկլյուզիվ սյուժեները բեռնվում են Youtube-ի վրա:

Տարվա ընթացքում պետության աջակցությամբ հրատարակվեց հայալեզու ամենշաբաթյա «Վրաստան» լրագիրը (52 համար, տիրաժը՝ 4000 օրինակ) և ադրբեջանալեզու ամենշաբաթյա «Գյուրջիստան» լրագիրը (53 համար, տիրաժը՝ 2000 օրինակ): Լրագրերը տարածվեցին ինչպես Թբիլիսիում, այնպես էլ Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում, պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարության հիմնարկություններում:

Քվեմո Քարթլիի տարածաշրջանում 2015 թվականից հրատարակվեց «Բոլնիսի» լրագիրը վրացերեն և ադրբեջաներեն լեզուներով, նաև գործում է ինտեռնետ-պորտալ www.bolnisi.ge. Ծավկայում լույս է տեսնում «Թրիալեթիս Էքսպրեսի» (Թրիալեթի ճեպընթաց) լրագիրը, իսկ Թեթրիձղարոյի մունիցիպալիտետում՝ ամենամսյա «Դիդգորելեբի» (Դիդգորեցիներ) լրագիրը, որի միջոցով ոչվրացալեզու բնակչությանը մատուցվում է անհրաժեշտ լրատվություն: Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում լույս է տեսնում վրացերեն լեզվով տարածաշրջանային ամենշաբաթյա «Սամխրեթիս կարիբճե» (Հարավի դարբաս) լրագիրը:

II. Հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և հնարավորությունների ստեղծում

Սոցիալական շարժունություն

Վրաստանի Աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարությունը հաշվետու ժամանակաշրջանում Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար պլանավորեց և իրականացրեց լրատվական քարոզարշավ առողջության և սոցիալական պաշտպանության պետական ծրագրերի մասին: Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ հաղորդակցություն իրականացվում է հիմնականում ռուսերեն լեզվով, իսկ հոծ բնակվող տարածաշրջաններում՝ համապատասխան լեզվով, ոչպաշտոնական թարգմանիչների օգնությամբ:

2016 թվականի «Առողջության աջակցություն» պետական ծրագրի շրջանակներում իրականացվեց տարբեր ակտիվություն: Այդ թվում, Վրաստանի Աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարության ՀԻԻԱ հիվանդությունների վերահսկման և հասարակական առողջության ազգային կենտրոնի կողմից տպագրվեցին հետևյալ բովանդակության լուսավորչական-լրատվական նյութերը. *Ցիտախտի օգտագործման վերահսկողության ուժեղացում*, ֆիզիկական ակտիվությունների աջակցություն, *Շ հեպատիտի կանխում և բնակչության կրթության աջակցություն* (90% վրացերեն, 5% հայերեն և 5% ադրբեջաներեն լեզվով):

Ենթակառույցի վերականգնում

Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառույցի նախարարության կողմից իրականացված գործունեություն⁶

⁶ Ամբողջական լրատվությունը դիտեք Հավելված 1

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվեց ենթակառուցային նախագծերի իրականացումը, ինչը նախատեսում է գազիֆիկացիա, ներքին ճանապարհների, ոռոգման և խմելու ջրի համակարգերի և դրսի լուսավորության վերականգնում և այլն:
Մասնավորապես.

Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան

- Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 40 նախագիծ, ընդհանուր արժողությամբ 15 450 642 լարի:
- ՀԻԻԱ Վրաստանի մունիցիպալային զարգացման հիմնադրամի կողմից Ախալցխեի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 5 նախագիծ, արժողությամբ 9 417 020 լարի:
- Գյուղի աջակցության ծրագրի շրջանակներում իրականացվեց 410 նախագիծ, ընդհանուր արժողությամբ 3 665 668 լարի:
- Տեղական բյուջեով իրականացվեց 292 նախագիծ, արժողությամբ 21 060 610 լարի:

Քվեմո Քարթլիի տարածաշրջան

- Քվեմո Քարթլիի տարածաշրջանում նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 57 նախագիծ, ընդհանուր արժողությամբ 23 269 781 լարի:
- Գյուղի աջակցության ծրագրի շրջանակներում իրականացվեց 436 նախագիծ, ընդհանուր արժողությամբ 6879074 լարի:
- ՀԻԻԱ – Վրաստանի մունիցիպալային զարգացման հիմնադրամի կողմից Դմանիսի և Թեթրիձարոյի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 4 նախագիծ, արժողությամբ 5 390 708 լարի:
- Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից Դմանիսի և Ծալկայի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 2 նախագիծ, արժողությամբ 816 001 լարի:

Կախեթի տարածաշրջան

- Կախեթի տարածաշրջանում (Լազոդեխի և Ախմետայի մունիցիպալիտետներ) նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 19 նախագիծ, ընդհանուր արժողությամբ 5 511 190 լարի:
- Գյուղի աջակցության ծրագրի շրջանակներում իրականացվեց 209 նախագիծ, ընդհանուր արժողությամբ 1 849 276 լարի:
- ՀԻԻԱ Վրաստանի մունիցիպալային զարգացման հիմնադրամի կողմից Լազոդեխի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 1 նախագիծ, արժողությամբ 970 301 լարի:

Վրաստանի գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացված գործունեություն.

Քվեմո Քարթլիի տարածաշրջան

- Լեռնային խողովակի ոռոգման համակարգի մայրուղային ջրանցքի, I և այլ շարքի բաշխիչների և ներքին տնտեսական ցանցի վերակառուցում – Մառնեուլի մունիցիպալիտետ, գյուղեր. Բեյթարափչո, Կասումլո, Կուշու, Բաիթալո, Աղմամեղլո, Կաչագանի, Թեքալո:
- Ք.Մառնեուլիում գտնվող Խրամ-ջրանցքի բաշխիչ երկաթ-բետոնե օղակներով սարքավորված սրահի վերակառուցում – Մառնեուլիի մունիցիպալիտետ, գյուղ Տալավարի:
- Լոճինի ոռոգման համակարգի գետաբերանային շինության վերականգնում-վերակառուցում, Վերին Սամգորիի Ո/Հ Ստորին մայրուղային ջրանցքի ջրով ապահովումը բարելավելու համար՝ Գարդաբանի մունիցիպալիտետ, գյուղ Գաչիանի:

Կախերթի տարածաշրջան

- Քվեմո Քարթլիի ոռոգման համակարգի գոտում փակ խողովակատարների սարքավորում՝ Սագարեջոյի մունիցիպալիտետ, Իորմուղալոյի համայնք:

Ներքին Քարթլիի տարածաշրջան

- Կասպիի մունիցիպալիտետում գտնվող ՄՊԸ Վրաստանի հողաբարելավմանը (մեխորացիային) պատկանող Խվիթիի հողաբարելավման պոմպակայանի դրսի էլ.մատակարարում՝ Կասպիի մունիցիպալիտետ, գյուղ Խվիթի:

Սամցխե-Ջավախերթի տարածաշրջան

- Ախալքալաքի մունիցիպալիտետում, գյուղ Խոսպիոյում գտնվող Ալմալոյի պոմպակայանի դրսի էլ.մատակարարում – Ախալքալաքի մունիցիպալիտետ, գյուղեր. Խոսպիո, Կուլիկամի, Մուրջախերթի, Չանդուրա, Վաչիանի և Դիլիսկա:

III. Որակյալ կրթության մատչելիության ապահովում և պետական լեզվի իմացության բարելավում

Կրթության յուրաքանչյուր աստիճան մատչելի է էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար: Ապահովված է էթնիկ փոքրամասնությունների մայրենի լեզուներով կրթություն ստանալու հնարավորությունը (աղբբեջաներեն, հայերեն, ռուսերեն): Վրաստանում գործում է 298 ոչվրացալեզու հանրային դպրոց և 81 ոչվրացալեզու սեկտոր: Այդ թվում՝ 118 աղբբեջանական, 131 հայկական, 49 ռուսական դպրոցներ: Նույնպես վրաց-աղբբեջանական սեկտոր՝ 32, վրաց-ռուսական սեկտոր՝ 42, վրաց-հայկական սեկտոր՝ 10, վրաց-աղբբեջանական-ռուսական սեկտոր՝ 1, վրաց-ռուսական-հայկական սեկտոր՝ 1:

Հաշվետու ժամանակաշրջանում կրթության և գիտության նախարարությունը շարունակեց աշխատանքը էթնիկ փոքրամասնությունների որակյալ կրթության մատչելիության աճի նպատակով: Այս ուղղությամբ կատարվեցին շատ քայլեր, մասնավորապես պատրաստվեց և հաստատվեց «Վաղ և նախադպրոցական դաստիարակության և կրթության մասին» օրենքը, մշակվեց «Կրթության քաղաքականությունը հասարակության ինտեգրման համար» կրթության մատչելիության միասնական ռազմավարական փաստաթուղթ: Ուշադրություն հատկացվեց ոչվրացալեզու դպրոցների մանկավարժների որակավորման բարձրացմանը և այլն:

Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը և իր ենթակայության ներքո գտնվող հանրային իրավունքի իրավաբանական անձերը հաշվետու ժամանակաշրջանում շարունակեցին տարբեր ծրագրերի և նախագծերի իրականացումը:

«Բազմամշակութային ամառային դպրոց» ենթածրագրի շրջանակներում իրականացվեց երկու ակտիվություն. «Բազմամշակութային ամառային դպրոց ուսուցիչների համար» և «Բազմամշակութային ամառային դպրոց աշակերտների համար»: «Բազմամշակութային ամառային դպրոց ուսուցիչների համար» ակտիվությանը մասնակցեց Վրաստանի տարածաշրջանների (Կախեթի, Քվեմո Քարթլի, Սամցխե Ջավախեթի) ոչվրացալեզու դպրոցների/սեկտորների 30 ուսուցիչ և բարձրալեռ բնակավայրերում գտնվող հանրային դպրոցների 20 ուսուցիչ: Մանկավարժների համար իրականացվեց 12-օրյա ամառային դպրոց Բակուրիանում, որը ներառում էր ինչպես միջմշակութային երկխոսությանը օժանդակող վարժանքներ/ինտերակտիվային ծրագրեր, այնպես էլ ոչակադեմիական ծրագրեր:

«Բազմամշակութային ամառային դպրոց աշակերտների համար» ակտիվությանը մասնակցեցին 2015-2016 ակադեմիական տարվա դրությամբ Վրաստանի Կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպված էսսեների մրցույթի հիման վրա ընտրված Վրաստանի տարածաշրջանների (Կախեթի, Քվեմո Քարթլի, Սամցխե-Ջավախեթի) ոչվրացալեզու դպրոցների/սեկտորների VIII, IX, X և XI դասարանների լավագույն արդյունքներ ունեցող 30 աշակերտ և Վրաստանի բարձրալեռ բնակավայրերում գտնվող հանրային դպրոցների VIII, IX, X և XI դասարանների լավագույն արդյունքներ ունեցող 20 աշակերտ: Աշակերտության համար իրականացվեց 12-օրյա ամառային դպրոց Բակուրիանում: Ամառային դպրոցը նախատեսում էր իրականացնել միջմշակութային երկխոսության զարգացման նշանառու ակտիվություններ:

Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը.

- Իրականացրեց «Օնոդների կրթության և ընդգրկվածության ենթածրագիր», որի ռազմավարական մի ուղղությունը ծնողներին վաղ ամուսնությունների ռիսկերի ծանոթացումն է: Նշված ենթածրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ: Ենթածրագրի շրջանակներում մշտապես անց են կացվում արտագնա միջոցառումներ տարածաշրջաններում: Հանրային դպրոցներում ծնողների համար անց են կացվում հանդիպումներ/հանրային դասախոսություններ, որտեղ քննարկվում են վաղ ամուսնությունների հետ կապված ռիսկերը (առողջության

և իրավական տեսանկյունից): Հանդիպումներին մասնակցում են հոգեբան, տեղական իրավապահ և սոցիալական աշխատող: 2016 թվականին էթնիկ ադրբեջանցի բնակչությամբ բնակեցված մունիցիպալիտետներում (Սագարեջո, Գարդաբանի, Դմանխի) անցկացվեց 11 հանրային հանդիպում:

- «Հանրային դպրոցի աշակերտներին տրանսպորտով ապահովելու» ծրագիրը, որն իրականացվում է 2015 թվականից, շարունակվեց և դրա գործողության տեսադաշտը ընդարձակվեց: 2016 թվականին ծրագիրը ներառում էր ոչվրացալեզու հանրային դպրոցների և վրացալեզու հանրային դպրոցների էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ աշակերտներ:
- Հաշվետու ժամանակաշրջանում մշակվեց և կրթության և գիտության նախարարի թիվ 40/Ն (ն) հրամանով հաստատվեց լեզվական կրթության հայեցակարգը: Այն մտավ 2017-2023 թվականների ազգային ուսումնական պլանի (տարրական աստիճան) I դուռը: Հայեցակարգը տեղադրված է Ազգային ուսումնական ծրագրի կայք-պորտալի վրա. www.ncp.ge:
- Հատուկ լուսավորչական սերվիսի՝ «Տարանցիկ լուսավորչական ծրագրի» նպատակն է անապաստան երեխաների լիարժեք ինտեգրումը հանրային դպրոցում: 2016 թվականի հունիս ամսից ծրագրին ընդգրկված է շուրջ 100 բենեֆիցիար: Սոցիալական ծառայության գործակալության անապաստան (այսպես կոչված, փողոցում ապրող և աշխատող) երեխաների շուրջօրյա ապաստարաններում և ցերեկային կենտրոններում աշխատում է 12 հատուկ ուսուցիչ (ակադեմիական ունակությունների զարգացում), 6 մարզիչ (կենսական ունակությունների զարգացում), ինչպես նաև մի քանի հոգեբան:
- 2016 թվականին իրականացվեց «Տարանցիկ լուսավորչական ծրագիր անապաստան երեխաների համար» ծրագիրը: Ծրագրի բենեֆիցիարներն էին Աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարության, ՀԻԲՍ սոցիալական պաշտպանության գործակալության ենթակայության ներքո գործող անապաստան երեխաների շուրջօրյա ապաստարաններում և ցերեկային կենտրոններում գտնվող աշակերտները (ք.Թբիլիսիում, ք.Ռուսթավիում, ք.Քութաիսիում): Ծրագրին ընդգրկված էր, այսպես կոչված, փողոցում ապրող և աշխատող շուրջ 80 երեխա, դրանցից 21-ը ընդունվեց դպրոց, իսկ 4-ը միացավ մասնագիտական վերապատրաստման ծրագրին: Իրականացվեց նաև անապաստան երեխաների, հանրային դպրոցների մանկավարժների և տնօրենների վարժանք: Թեման «Խոցելի խմբերի երեխաների կրթական կարիքների նույնականացում, նրանց հետ հաղորդակցության և համագործակցության ռազմավարություններ» և դպրոցի աշակերտների ծնողների համար տեղեկատվական քարոզարշավ անապաստան երեխաների նկատմամբ խարանի հաղթահարման համար:
- Վարժանքներ անցկացվեցին շուրջ 40 հանրային դպրոցի 150 ուսուցչի (մի քանի տնօրենի): 20 հանրային դպրոցում իրականացվեց տեղեկատվական քարոզարշավ անապաստան երեխաների ծնողների համար, մասնակցեց շուրջ 1000 ծնող:

ՀԻՒԱ գնահատման և քննությունների ազգային կենտրոնի գործունեությունը.

Ազգային ուսումնական օլիմպիադա

2015-2016 ուսումնական տարում ազգային ուսումնական օլիմպիադա հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով անցկացվեց Վրաստանում գործող բոլոր հանրակրթական հաստատություններում, այդ թվում նաև ոչվրացալեզու դպրոցներում: Հատկանշական է, որ ոչվրացալեզու դպրոցի աշակերտները մասնակցեցին վրաց լեզվից օլիմպիադային:

Վրաց լեզու (ոչվրացալեզու դպրոցներում)	1127
Առարկաներ ադրբեջաներեն լեզվով	547
Առարկաներ հայերեն լեզվով	710
Առարկաներ ռուսերեն լեզվով	379

Երրորդ փուլի հիման վրա բացահայտվեցին հաղթողները՝ այդ թվում վրաց լեզվից՝ 9 ռուսալեզու աշակերտ, 1 հայալեզու աշակերտ:

Դպրոցի ավարտական քննություններ

2015-2016 ուսումնական տարվա ավարտական քննությունների հիման վրա լրիվ միջնակարգ կրթությունը հաստատող փաստաթուղթ ստացավ.

Հայալեզու աշակերտ - 703,

Ադրբեջանալեզու աշակերտ – 650,

Ռուսալեզու աշակերտ – 926:

Բարձրագույն կրթության մատչելիության աճ

2010 թվականից էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները հնարավորություն ունեն ստանալ բարձրագույն կրթություն պարզեցված կարգով: Պարզեցված համակարգը, այսպես կոչված, «1+4 ծրագիրը» նախատեսում է ընդհանուր ունակությունների քննությունը հանձնել արխազերեն, օսերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով և համապատասխան միավորներ հավաքելու դեպքում ձեռք բերել բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն: Երիտասարդները մեկ տարվա ընթացքում անցնում են վրաց լեզվի նախապատրաստական կրթական դասընթաց և այնուհետև 60 վարկ հավաքելու դեպքում շարունակում են ուսումը իրենց համար ցանկալի ֆակուլտետում: 2016-2017 ակադեմիական տարվա համար քննությունների ազգային կենտրոնը ներկայացրեց արխազալեզու

ընդհանուր ունակությունների թեստ, ինչը հնարավորություն է տալիս արխագալեզու դիմորդներին միանալ ծրագրին և արդեն արխագերեն լեզվով հանձնել ընդունելության քննությունները պարզեցված ձևով: Օսալեզու երիտասարդների համար ծրագիրը լիարժեք գործեց 2015-2016 ուսումնական տարվանից:

2016 թվականի համազգային քննություններից, ընդհանուր ունակությունների աղբրեջանալեզու և հայալեզու թեստերի արդյունքների հիման վրա բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու իրավունք ձեռք բերեց 960 դիմորդ, այստեղից՝ ընդհանուր ունակությունների աղբրեջանալեզու թեստի հիման վրա՝ 660, իսկ ընդհանուր ունակությունների հայալեզու թեստի հիման վրա՝ 300 դիմորդ:

2016 թվականին համազգային քննությունները միայն ընդհանուր ունակությունների աղբրեջանալեզու և հայալեզու թեստերի արդյունքներով Պետական ուսումնական դրամաշնորհով ֆինանսավորվեց 194 դիմորդ (ընդհանուր ունակությունների աղբրեջանալեզու թեստի հիման վրա 99, ընդհանուր ունակությունների հայալեզու թեստի հիման վրա 95 դիմորդ):

Ակադեմիական ծրագրերին ընդունվեցին.

- Ընդհանուր ունակությունների հայալեզու թեստի հիման վրա 3 դիմորդ (մեկը ստացավ դրամաշնորհ),
- Ընդհանուր ունակությունների աղբրեջանալեզու թեստի հիման վրա 8 դիմորդ (մեկը ստացավ դրամաշնորհ):

Մեկ դիմորդ հանձնեց արխագական լեզվի և գրականության թեստ և ընդունվեց բարձրագույն ուսումնական հաստատության ակադեմիական ծրագրին:

ՀԻԻԱ Դավիթ Աղմաշենբեղիի անվան Վրաստանի ազգային պաշտպանության ակադեմիայում 2015-2016 ուսումնական տարում «1+4 ծրագրի» շրջանակներում ընդունվեց միայն մեկ աղբրեջանալեզու դիմորդ, ով սեփական ցանկությամբ շուտով թողեց ակադեմիան և նա հանվեց նշված ծրագրից: Իսկ ընդհանրապես, 2016 թվականի տվյալներով, ակադեմիայում «1+4 ծրագրով» ընդունվել է 7 յունկեր (3 աղբրեջանցի, 4 հայ, այստեղից՝ երկրորդ կուրս՝ 3, երրորդ կուրս՝ 2 և չորրորդ կուրս՝ 2):

Մասնագիտական և չափահասների կրթության ապահովում

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար մատչելի է մասնագիտական կրթությունը: Այս ուղղությամբ ակտիվ գործունեություն է վարում ՀԻԻԱ Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցը, որի նպատակն է էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող և բարձրալեռ տարածաշրջաններում, հանրային ծառայությունում որակյալ կադրերի պակասը հաղթահարել հանրային աստիճանավորների

որակավորման բարձրացման ճանապարհով, ինչպես նաև ցանկացած շահագրգիռ անձի օժանդակել պետական լեզու սովորելը և նրանց ինտեգրումը միասնական պետական անսահմանությունում:

Տարվա ընթացում պետական վարչարարության դպրոցն իրականացրեց «Հանրային կառավարման և վարչարարության» և «Պետական լեզվի ուսուցման» ծրագրեր:

«Հանրային կառավարման և վարչարարության» ծրագրի վեց ճյուղային ուղղության (պետական գնումներ, հանրային կազմակերպությունների կառավարում, մարդկային ռեսուրսների վարում և գործավարություն հանրային սեկտորում, հանրային ֆինանսների վարում, հասարակայնության հետ հարաբերություններ և հաղորդակցություն, ենթակառուցային նախագծերի տեխնիկական վերահսկողություն) շրջանակներում 2016 թվականին ուսուցում անցան 191 ունկնդիրներ:

- «Հանրային կառավարման և վարչարարության» ծրագրի շրջանակներում մշակվեց և արմատավորվեց ծրագրի վարկերով հաշվարկի համակարգը,
- Փոփոխություններ մտան և նորացվեց ունկնդիրների ուսման արդյունքների գնահատման համակարգը,
- Արմատավորվեց քննությունների կենտրոնացված կարգով անցկացման համակարգը,
- «Հանրային կառավարման և վարչարարության» ծրագրի շրջանակներում մշակվեց և արմատավորվեց «Ենթակառուցվածքային նախագծերի տեխնիկական վերահսկողության» նոր ճյուղային ուղղությունը,
- Փոփոխություններ մտան հանրային կառավարման և վարչարարության ենթածրագրի, ուսումնական դասընթացների կարգավիճակի սահմանման մեջ,
- «Հանրային կառավարման և վարչարարության» ծրագրում ընդգրկված մարզիչների որակավորման բարձրացման և ծրագրի 2016 թվականի առաջին հոսքի արդյունքների վերլուծության նպատակով տեղի ունեցավ 4-օրյա աշխատանքային հանդիպում ինչպես ծրագրին ընդգրկված մարզիչների, այնպես էլ ուսումնական գործընթացներում ընդգրկված աշխատակիցների մասնակցությամբ,
- Մշակվեց նոր վարժանք դասընթաց «Վրաստանը և Եվրատլանտյան ինտեգրումը», որն անցկացվեց 3 տարածաշրջաններում. Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլի և Կախեթի, մասնակցեց 201 ունկնդիր (Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան՝ 60 մասնակից, Քվեմո Քարթլիի տարածաշրջան՝ 107 մասնակից, Կախեթի՝ 34 մասնակից),
- «Գործավարության և էլեկտրոնային կառավարման» ուսումնական դասընթացի շրջանակներում, որն անցկացվեց Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում, վերապատրաստում անցավ հանրային ծառայությունում զբաղված 92 անձ (Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան՝ 71 ունկնդիր, Քվեմո Քարթլի՝ 21 ունկնդիր),
- Մշակվեց և ուսումնական գործընթացների վարման խորհրդում հաստատվեց «Գենդերային բյուջետացում» դասընթացը: Դասընթացի շրջանակներում ուսումնառություն անցավ 17 ունկնդիր,

- Համակարգչային տեխնոլոգիաների ուսումնառության բազիսային ծրագրում ընդունվեց և ուսումնառության դասընաց անցավ 220 ունկնդիր (Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան՝ 75 ունկնդիր, Քվեմո Քարթլիի տարածաշրջան՝ 145 ունկնդիր),
- Մշակվեց և ՀԻԲ Վանո Խուխունաիշվիլիի անվան արդյունավետ կառավարման համակարգի և տարածքային կառուցվածքի բարեփոխման կենտրոնում գրանցվեց 16 կարճաժամկետ ուսումնական դասընթաց:

Ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների որակավորման բարձրացում

ՀԻԲՍ ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի գործունեությունը.

«Ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագիր»

2016 թվականին «Վրաց լեզուն ապագա հաջողության համար» ծրագիրը և «Ազգային փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջանների հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման և կարիերային առաջընթացի աջակցության ծրագիրը» միավորվեց «Ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագիր» վերնագրով:

Ծրագրի նպատակն է աջակցել ոչվրացալեզու դպրոցների/սեկտորների ուսուցիչների մասնագիտական զարգացմանը և ուսում/ուսուցման որակը բարելավել պետական լեզվի ուսուցման ուժեղացման ճանապարհով: Բացի դրանից, ծրագիրը կողմնորոշված է (2016-2019թթ.) ոչվրացալեզու դպրոցների տեղական ուսուցիչների ինչպես առարկայական քննություններին նախապատրաստության, այնպես էլ նրանց պետական լեզուն սովորեցնելու վրա: Հաշվետու ժամանակաշրջանում ծրագրի շրջանակներում իրականացվեցին մի շարք միջոցառումներ.

Վրաստանի զանգվածով գործող ոչվրացալեզու դպրոցների/սեկտորների ուսուցիչներին, դպրոցների գրադարանների և կրթական ռեսուրս կենտրոններին բաժանվեց.

- Ուսուցչի գործունեության մեկնարկի, մասնագիտական զարգացման և կարիերային առաջընթացի սխեմայի փաստաթղթերի ժողովածու: Հրատարակության էլեկտրոնային տարբերակի մատչելիությունը ապահովված է 2015 թվականի մայիսից:

	Աղբյուրական	Ռուսական	Հայկական
Ռեսուրս-կենտրոն	11	22	13 հատ
Դպրոց	113	40	122 հատ
Ուսուցիչ	2955	1142	2805 հատ
Ընդամենը	3,079	1,204	2,940

- Ուսուցչի գործունեության մեկնարկի, մասնագիտական զարգացման և կարիերային առաջընթացի սխեմայի ուղեցույցի I մասը: Հրատարակության էլեկտրոնային տարբերակի մատչելիությունն ապահովված է 2015 թվականի սեպտեմբերից:

	Ադրբեջանական	Ռուսական	Հայկական
Ռեսուրս-կենտրոն	11	22	13 հատ
Դպրոց	113	40	122 հատ
Ուսուցիչ	2955	1142	2805 հատ
Ընդամենը	3,079	1,204	2,940

- «Ուսուցչի գործունեության մեկնարկի, մասնագիտական զարգացման և կարիերային առաջընթացի սխեմայի» մասին տեղեկատվություն մատակարարվեց դպրոցի վարչությանը և ֆասիլիտատորներին.
- ՀԻԻԱ Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի տնօրենի 2016 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 217 հրամանի համապատասխան հաստատվեց ուսուցչի ինքնագնահատման նոր հարցաթերթ: Հարցաթերթը թարգմանվեց ադրբեջաներեն, ռուսերեն և հայերեն լեզուներով և տեղադրվեց ՀԻԻԱ Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի կայք-էջին: Հարցաթերթի էլեկտրոնային մատչելիության մասին լրատվությունը տարածվեց տպագիր և էլեկտրոնային մեդիայի միջոցով,
- ՀԻԻԱ Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի կողմից մշակված վարժանք ծրագրերը և դրանց հետ կապված այլ վարժանքային նյութը լրիվությամբ թարգմանվեց ադրբեջաներեն և ռուսերեն լեզվով,
- Հայտարարվեց ադրբեջանալեզու, ռուսալեզու և հայալեզու մարզիչների մրցույթ: Նշված մրցույթին մասնակցեց 320 մրցակից, որոնցից վերջնականապես ընտրվեց 25 մարզիչ,
- Վերապատրաստվեցին ոչվրացալեզու դպրոցների ադրբեջանալեզու ուսուցիչներ հետևյալ առարկաներից. ֆիզիկա, պատմություն, մաթեմատիկա, 2015-2016 ուսումնական տարվա ընթացքում Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի ոչվրացալեզու 179 դպրոց գործուղվեցին 105 վրացերենի, որպես երկրորդ լեզվի խորհրդատու-ուսուցիչ, վրացերենի, պատմության և աշխարհագրության 135 օժանդակ ուսուցիչ և ազգային ուսումնական պլանով նախատեսված ցանկացած առարկայի 14 երկլեզու ուսուցիչ: Ծրագրի շրջանակներում գործուղված ուսուցիչները տեղական գործընկերին օգնություն էին ցույց տալիս դասաժամերը վարելու մեջ (Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան – 30 խորհրդատու-ուսուցիչ, 42 վրացալեզու օժանդակ ուսուցիչ, 5 երկլեզու օժանդակ ուսուցիչ, Քվեմո Քարթլիի տարածաշրջան՝ 70 խորհրդատու-ուսուցիչ, 82 վրացալեզու օժանդակ ուսուցիչ, 9 երկլեզու օժանդակ ուսուցիչ),
- Թիրախային դպրոցների տեղական ուսուցիչներին առաջարկված 51 մակարդակի դասավանդվող լեզվի դասընթացում ընդգրկված էր 221 ուսուցիչ: Վերջնական գնահատում հաջողությամբ անցավ 135 ունկնդիր, իսկ 52 մակարդակի դասընթացում

աղբրեջանական լեզուներով թեստավորման ուղիով ընդունվեցին մասնագիտական ծրագրերին, պարտադիր կերպով սահմանվեց ուսումը սկսել վրաց լեզվի մոդուլով:

2016 թվականի գարնանային ընդունելության շրջանակներում, վրաց լեզվի մոդուլ անցան երեք, իսկ աշնանային ընդունելության շրջանակներում՝ 10 ուսանող:

Աջակցություն պետական լեզվի ուսուցման բարելավմանը

Պետական լեզվի իմացության հարցը կրկին մնում է որպես կարևոր մարտահրավեր: Համապատասխանաբար, պետությունը շարունակում է տարբեր ծրագրերի և նախագծերի իրականացման ուղիով կրթության բոլոր աստիճանների վրա բարձրացնել վրաց լեզվի իմացության մակարդակը: Բացի դրանից, թիրախային խումբ են ներկայացնում հանրային աստիճանավորները, ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչները և ընդհանուր առմամբ ցանկացած շահագրգիռ անձ:

Վրաստանի կրթության և գիտության նախարարությունում իրականացվում է «Վրացերենի, որպես օտար լեզվի ուսուցման ծրագիր»: Ծրագիրն իրականացվում է Եվրոպայի խորհրդի լեզվական քաղաքականության վարչության հետ համագործակցությամբ և ընդհանուր եվրոպական լեզվական իրավասությունների հաշվառումով: Ծրագրի նպատակն է ունկնդիրներին և ուսուցիչներին առաջարկել վրացերենի, որպես օտար լեզվի, ուսում/ուսուցման լրիվ փաթեթ: Այս նպատակին հասնելու համար իրականացվում են համակարգված և հաջորդական աշխատանքներ. ստեղծվել է վրաց լեզվի տիրապետման մակարդակների չափանիշային նկարագրություն, (A1, A2, B1, B2, C1, C2 մակարդակներ): Վրացերենի, որպես օտար լեզվի, չափանիշային դարձնելու անհրաժեշտությունը հայտնվեց այն բանից հետո, երբ վրացական պետությունը ինտենսիվորեն ընդգրկվեց միջազգային գործընթացներին և համապատասխանաբար, ստեղծեց վրաց լեզվի քննարկման անհրաժեշտությունը երկու փոխադարձային ենթատեքստով. վրացերենը՝ Վրաստանի պետական լեզու, այսինքն՝ ներքին գործածության լեզու և վրացերենը՝ համաշխարհային շրջանառության մեջ գտնվող մի լեզու, այսինքն՝ օրինականացված լեզու:

Յուրաքանչյուր մակարդակի համար նախատեսված է հարմարեցված ընթերցանության գրականություն: B1 մակարդակից յուրաքանչյուր հավաքածուին կավելանա ուսուցչի գիրքը: <http://www.geofl.ge> կայք-էջին նաև տեղադրված են օժանդակ ուսումնական-մեթոդական նյութերը:

Կրթության և գիտության նախարարության ՀԻԻԱ Զուրաբ Ժվանիայի պետական վարչարարության դպրոցը իրականացրեց «Պետական լեզվի ուսուցման ծրագիր», որի շրջանակներում.

- Դպրոցի 8 տարածաշրջանային ուսումնական կենտրոնին ավելացավ 2 նոր կենտրոն Լագոդեխում և Ախմետայում,

- Դպրոցի տասը տարածաշրջանային ուսումնական կենտրոնում իրականացվեց պետական լեզվի ուսուցման ծրագիր երեք A1, A2 և B1 մակարդակի շրջանակներում,
- Ստեղծվեցին շարժական խմբեր, որոնք շրջանային կենտրոնից հեռու գտնվող գյուղերի բնակիչների համար տեղում իրականացրեցին պետական լեզվի ուսուցման ծրագիր: Ծրագրի շրջանակներում ստեղծվեց 165 խումբ 66 գյուղում (Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան՝ 70 խումբ 26 գյուղում, Քվեմո-Քարթլիի տարածաշրջան՝ 69 խումբ 34 գյուղում, Կախեթի տարածաշրջան՝ 26 խումբ 6 գյուղում),
- Տպագրվեցին յուրաքանչյուր մակարդակին համապատասխան ուսումնական ձեռնարկներ,
- Կազմվեց 2016 թվականի ծրագրում ընդգրկված ունկնդիրների միասնական տվյալների բազա,
- Տարվա ընթացքում տարածաշրջանային ուսումնական կենտրոններում մշտապես իրականացվում էր ուսումնական գործընթացի մոնիթորինգ. բաց և պլանային դասերին ներկայություն,
- Պետական լեզվի ուսուցման ծրագրի շրջանակներում վերապատրաստվեց 3193 ունկնդիր (Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան – 1462 ունկնդիր, Քվեմո-Քարթլիի տարածաշրջան – 1266 ունկնդիր, Կախեթի տարածաշրջան – 465 ունկնդիր),
- Ծրագրի զարգացման նպատակով ստեղծվեց ճյուղային ուղղությունների ուսումնական դասընթացների համար ձեռնարկների ստեղծման վրա աշխատող 4 խումբ, դպրոցն ընտրեց մեթոդիստներ և փորձագետներ: Ընթանում է աշխատանք 4 ճյուղային ուղղությամբ. իրավագիտություն, մենեջմենտ, ֆինանսներ և գնումներ և ենթակառույց,
- Մշակվեց վերջնական թեստավորում անցկացնելու էլեկտրոնային ձևը, պատրաստվեցին համապատասխան թեստային առաջադրանքներ և պիլոտային ռեժիմում 5 տարածաշրջանային ուսումնական կենտրոնում անցկացվեց նշված էլեկտրոնային թեստավորումը (Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան՝ 2 տարածաշրջանային ուսումնական կենտրոն, Քվեմո Քարթլիի տարածաշրջան՝ 3 տարածաշրջանային ուսումնական կենտրոն):

Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում. Ք. Ախալքալաքում և ք. Նինոծմինդայում գործում են Ջուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի տարածաշրջանային ուսումնական կենտրոնները, որտեղ պետական լեզվի ուսուցման ծրագիրն իրականացվում է տեղում, իսկ 2015 թվականից հանրային կառավարման և վարչարարության ծրագրի շրջանակներում ուսուցումն ընթանում է տարբեր ճյուղային ուղղություններով: Պետական լեզվի ուսուցման ծրագրով ուսուցումն իրականացվում է Ախալցխիսում, շարժուն խմբերում, որոնք տեղադրված են հանրային դպրոցների շինություններում: Հաշվետու ժամանակաընթացքում նշված կենտրոններում տարբեր ծրագրերից օգտվեց 1668 ունկնդիր:

Քվեմո Քարթլիի տարածաշրջանում. Մառնեուլիի, Բոլնիսի, Դմանիսի, Գարդաբանի և Ծալկայի մունիցիպալիտետներում Ջուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության

դպրոցի տարածաշրջանային ուսումնական կենտրոնների կողմից առաջարկված վերը նշված ծրագրերից օգտվեց 1539 ունկնդիր:

Իսկ **Կախեթի շրջանում** Լագոդեխի և Ախմետայի մունիցիպալիտետներում, ինչպես նաև Սագարեջոյի մունիցիպալիտետի Լամբալո գյուղում ուսումնական կենտրոնների կողմից առաջարկված ծրագրերի ունկնդիրների քանակը կազմեց 499:

Քացի դրանից, պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացման նպատակով տարբեր հիմնարկությունների կողմից իրականացվեցին կոնկրետ միջոցառումներ .

Մայրաքաղաքում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար պետական լեզվի ուսուցման նպատակով **ք. Թբիլիսիի մունիցիպալիտետի Սակրեբուլոյի**, մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական ինտեգրման հանձնաժողովի և ՀԻԻԱ «Ձուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի» միջև 2016 թվականի փետրվարի 16-ին ձևակերպվեց համագործակցության մասին հուշագիր:

«Քաղաքացիական հասարակության հզորացման» նախագծի շրջանակներում, **ՀԻԻԱ Արդարադատության ուսումնական կենտրոնը**, 2016 թվականի ընթացքում վրաց լեզվի ուսուցման անվճար դասընթացներ առաջարկեց Վրաստանի ոչվրացալեզու քաղաքացիներին: Նշված դասընթացները ուսումնական կենտրոնն իրականացնում է 2015 թվականի սեպտեմբերից, տարբեր դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ և ՀԻԻԱ պետական սերվիսների զարգացման գործակալության հետ համագործակցությամբ: 2016 թվականի ընթացքում 4 հասարակական կենտրոններում վրաց լեզվի դասընթաց անցավ 97 ունկնդիր (Կագրեթի, Կաբալի, Փոկա, Սադախլո):

2016 թվականի հուլիսին ստեղծվեց վրաց լեզվի մարզիչների խումբ, որի անդամներն ընտրվեցին փորձի հիման վրա: 6 մարզիչից 4 ունի ոչվրացալեզու դպրոցներում դասավանդելու փորձ և տիրապետում է հայերեն կամ ադրբեջաներեն լեզվին:

Պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարության սոցիալական բաժանմունքն ապահովում է ոչվրացալեզու դատապարտյալների ընդգրկումը վրաց լեզվի ուսուցման ծրագրում: Վրաց լեզվի ուսուցման դասընթացներում 2016 թվականի ընթացքում ընդգրկված էր 128 ոչվրացալեզու դատապարտյալ:

Վրաստանի Սպորտի և երիտասարդության գործերով նախարարության կողմից իրականացվեց էթնիկ ադրբեջանցի և հայ երիտասարդների համար վրաց լեզվի օնլայն/հեռահար (դիստանցիոն) ուսուցում: Նշված նախագծի մասին տեղեկատվության տարածման նպատակով 2016 թվականին իրականացվեց լրատվության մատուցում պետական կառուցվածքներում, Թբիլիսիում և տարածաշրջաններում աշխատող ոչկառավարական կազմակերպություններին, ինչպես նաև տարածաշրջանային մունիցիպալիտետներին: Նախագիծը հնարավորություն է տալիս ցանկացած համացանցային օգտատիրոջ՝ Վրաստանի ցանկացած կետից բարելավելու պետական լեզվի իմացության

մակարդակը և/կամ տիրապետելու վրաց լեզուն բազիսային աստիճանից, միանգամայն անվճար: Պարտադիր է գրանցում անցնել հետևյալ հասցեով. <http://teach.ge/Programs/6>.

IV. Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանում և հանդուրժողական միջավայրի խրախուսում

Հաշվետու ժամանակաշրջանում Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության աջակցությամբ և անմիջական մասնակցությամբ շարունակվեց տարբեր ծրագրերի/նախագծերի և միջոցառումների իրականացումը, ինչը նպատակաուղղված էր էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պաշտպանությանը-զարգացմանը և ժողովրդականացմանը: Մշակութային ինքնադրսևորման աջակցության և վրացական անսահմանությունում հետագա ինտեգրման նպատակով շարունակվեց աջակցությունը հանրային իրավունքի իրավաբանական անձանց, մասնավորապես. Դավիթ Բաագովի անվան վրացի հրեաների և վրաց-հրեական փոխհարաբերությունների պատմության թանգարանի, Միրզա-Ֆաթալի Ախունդովի անվան ադրբեջանական մշակույթի թանգարանի, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական, Թբիլիսիի Հեյդար Ալինի անվան ադրբեջանական և Ալ. Գրիբոյեդովի անվան ռուսական պրոֆեսիոնալ պետական դրամատիկական թատրոնների գործունեությանը:

Աջակցություն թատրոններին

Ալեքսանդր Գրիբոյեդովի անվան ռուսական պրոֆեսիոնալ դրամատիկական թատրոնը 2016 թվականին իրականացրեց մի շարք ակտիվություններ. կայացավ 118 ներկայացում, այդ թվում 7 պրեմիերա, որոնց ներկա գտնվեց 5000 հանդիսատես, ինչպես նաև 7 արտագնա ներկայացում տարածաշրջաններում, արտասահմանում կայացավ 2 հյուրախաղ, ներկա էր 959 հանդիսատես:

Ինչ վերաբերում է Թբիլիսիի Հեյդար Ալինի անվան ադրբեջանական և Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պրոֆեսիոնալ պետական դրամատիկական թատրոններին, ադրբեջանական թատրոնն անցկացրեց 2 ներկայացում, կայացավ 5 պրեմիերային ներկայացում, հանդիսատեսի թվաքանակը՝ 400, իսկ հայկական թատրոնում կայացավ 15 ներկայացում, այդ թվում 1 պրեմիերա, իրականացվեց 7 հյուրախաղ տարածաշրջանում: Անցկացվեցին արտագնա ներկայացումներ 9 գյուղում: Ընդհանուր առմամբ ներկա էր 2272 հանդիսատես:

Աջակցություն թանգարաններին

ՀԻԲԱ Դավիթ Բաագովի անվան Վրաստանի հրեաների և վրաց-հրեական փոխհարաբերությունների պատմության թանգարան: 2016 թվականին իրականացվեցին հետևյալ ակտիվությունները. գիտական կոնֆերանս «Թբիլիսի-Երուսաղեմ», թանգարանի հիմնադրամների գույքագրում և էլեկտրոնային տարբերակի ստեղծում, գրադարանի և թանգարանի գույքագրում, 19-րդ դարի մամուլի նյութերում Վրաստանի հրեաների

պատմության մասին նյութերի որոնում և էլեկտրոնային տարբերակի ստեղծում: Տարվա ընթացքում անցկացվեց 11 միջոցառում:

ՀԻՒԱ Միրզա-Ֆաթալի Ախունդովի անվան աղբբեջանական մշակույթի թանգարանում կայացավ 3 ցուցահանդես, 1 տեսահոլովակի շնորհանդես, 3 հանդիպում/միջոցառում: **ՀԻՒԱ Սմիռնովների** թանգարանում ավարտվեց գույքագրման գործընթացը:

Էթնիկ փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանություն և ժողովրդականացում

- Ավարտվեց Վրաստանում գոյություն ունեցող գերմանական մշակութային ժառանգության գույքագրումը, մասնավորապես. Թեթրիձղարոյի, Ծալկայի, Մառնեուլիի և Դմանիսի մունիցիպալիտետներում և ք. Թբիլիսիի Դիդուբեի շրջանում: Գույքագրման արդյունքում հաշվառվեց շուրջ 150 օբյեկտ: Մշակութային ժառանգության յուրաքանչյուր օբյեկտի մասին պատրաստվեցին դաշտային և հաշվառման քարտեր: Բացի դրանից, պատրաստվեց Վրաստանի քարտեզը, որի վրա փոխադրված են վերը նշված գույքագրման արդյունքում բացահայտված գերմանական մշակութային ժառանգության օբյեկտները,
- Բացահայտված շուրջ 150 գերմանական մշակութային ժառանգության օբյեկտների համար պլանավորվում են կարգավիճակի շնորհման գործընթացներ: 2016 թվականին մշակութային ժառանգության անշարժ հուշարձանի կարգավիճակ շնորհվեց գերմանական մշակութային ժառանգության շուրջ 40 օբյեկտի: Այդ թվում՝ Ծալկայի մունիցիպալիտետում, գյուղ Թրիալեթում, նաև Խրամեկ-ի փողոցի վրա գտնվող Թրիալեթի եկեղեցին,
- Պատրաստվեցին նախագծային փաստաթղթեր Նորաշենի տաճարի հատակի զգման համար: Ավարտվեց Նորաշենի եկեղեցու վերականգնման փուլը: 2016 թվականին Վրաստանի պատմական հուշարձանների պաշտպանության և փրկության հիմնադրամի ֆինանսավորմամբ, իրականացվեց Նորաշենի Սուրբ Աստվածածին տաճարի վերականգնման փուլը:

Աջակցություն էթնիկ փոքրամասնությունների մշակույթին

Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի ինքնության պահպանության նպատակով գերակայող «Էթնիկ փոքրամասնություններին աջակցության» շրջանակներում, շարունակվեց օժանդակությունը մշակույթի ոլորտում գործող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ստեղծագործություններն արտացոլող ցուցահանդեսներին, հրատարակություններին, ներկայացումներին, երեկոներին, այլ մշակութային միջոցառումներին:

Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության աջակցությամբ իրականացվեց «Ադրբեջանական ձեռքով գործած գորգերի ավանդույթի պահպանության» նախագիծը (ՀԻԻԱ Միրզա-Ֆաթալի Ախունդովի ադրբեջանական մշակույթի թանգարան) – նախագիծը նկատառում է ձեռքով գործած գորգերի ադրբեջանական ավանդույթի պահպանում-զարգացումը, գորգերի տեխնոլոգիայի ուսուցման նպատակով խմբակների ստեղծումը, որտեղ ձեռքի աշխատանքի գիտակները երիտասարդներին սովորեցնում են գորգերի և գորելենների հյուսում: Նախագծի շրջանակներում զբաղված է 6 մանկավարժ, պատրաստվել է շուրջ 15 երիտասարդ, 25 երեխա սովորում է կենտրոնում և տարածաշրջաններում (Մառնեուլի-Բոլնիսի-Թեթրիձղարո),

Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի ինքնության պահպանման նպատակով իրականացվեցին հետևյալ միջոցառումները.

- Միքայել Թարիվերդիևի 85-ամյա հոբելյանին նվիրված համերգ,
- Ոչձեռներեցային (ոչկոմերցիոն) իրավաբանական անձ՝ Ո(Ո)ԻԱ «Կովկասյան խճանկար» -ը հրատարակեց օս գրող Գիորգի Բեսթաուրի երկլեզու վրաց-օսական ժողովածուն,
- Ռաշիդ Բեհբուրովի 100-ամյա հոբելյանին նվիրվեց համերգ,
- ՀԻԻԱ չերքեզական (ադիգեյական) մշակույթի կենտրոնում կայացավ գիտական նստաշրջան (չերքեզներ, արխազներ, օսեր և վրաց-կովկասյան քաղաքակրթության ենթատեքստային աջակցություն),
- Բաթումում իրականացվեց հայտնի երգիչ Փոլադ Բյուլբյուլ օղլիի երաժշտության վրա գրված ժամանակակից «Խամսե» բալետը,
- Է.Մեչիտովայի «Կովկասյան ջազ-փառատոնը» միավորում է Վրաստանում և Կովկասում հայտնի ստեղծագործական խմբերի և երաժիշտների, անցկացվեցին համերգներ:
- ք.Ախալցխիսեում գորգերի միջազգային փառատոնը կապվում է Կովկասում գորգի տեխնոլոգիական արտադրության և պատմական ավանդույթների կուտակման, փոխանակման, գորգեր արտադրողների միջև կապերի հաստատման հետ:

Միջմշակութային երկխոսության զարգացում

Միջմշակութային երկխոսության զարգացման նպատակով մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության կողմից իրականացվեցին բազմաթիվ նախագծեր.

- **«Բազմազան Վրաստան» նախագիծը** նախատեսում էր մշակութային միջոցառումների անցկացում ինչպես Մառնեուլիում, այնպես էլ Ախալքալաքում, Նինոծմինդայում և Բոլնիսում, օժանդակություն Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ինտեգրմանը մշակութային կյանքին, երիտասարդների

իրագրելվածության և արհեստակցական կրթության մակարդակի բարձրացում, ստեղծագործական ունակությունների զարգացում: Նախագծի շրջանակներում անցկացվեցին մշակութային միջոցառումներ Բոլնիսում, Նինոծմինդայում, Մառնեուլիում և Ախալքալաքում:

- **«Բոլոր մշակույթները տարբեր, բայց հավասար են»** նախագծի շրջանակներում ք.Մառնեուլիում և ք.Նինոծմինդայում անցկացվեցին այլ և այլ էթնոսների ներկայացուցիչների ազգագրական համույթների համերգներ և մրցույթներ նկարչությունից: Թբիլիսիում կազմակերպվեց նշված մրցույթները և համերգներն արտացոլող ֆոտո-ցուցահանդես:
- Ո(Ո)ԻԱ «Էթնիկական մշակույթի հասարակությունն» իրականացրեց դասական երաժշտության երեկո **«Բազմազանության տուն»** նախագիծը: Նախագծի հեղինակները Վրաստանի տարբեր անկյուններում ընտրեցին շնորհալի երիտասարդների և անցկացրեցին երեկո Թբիլիսիի Ա.Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցի համերգային դահլիճում:
- Ո(Ո)ԻԱ Արվեստի աջակցության կենտրոնի **«Բազմազան Վրաստանը աֆիշներում»** նախագծի շրջանակներում պատրաստվեց և հրատարակվեց նաև անվանումների քարտարան, տպագրվեցին և ցուցադրվեցին աֆիշներ:
- **«Մերզո Փարաջանովի Թբիլիսին»** - Մերզո Փարաջանովի ստեղծագործությունն արտացոլող քարտարանի հրատարակություն: Գրքում ներկայացված է նկարիչների և արվեստագետների մոտեցումը հայտնի ռեժիսորի և նկարչի ստեղծագործությանը, նաև նյութեր նրա կյանքի մասին: Քարտարանի շնորհանդեսը կայացավ Վրաստանի Ազգային թանգարանում և Կիևում՝ Դովժենկոյի ազգային կենտրոնում:
- «Դեմոս» միության նախաձեռնությամբ մշակվեց նախագիծ **«Այլ Վրաստան որտեղ կա»** վերնագրով, որի նպատակն էր վրացական երգի ժողովրդականացումը դեռահասների շրջանում: Ք.Մառնեուլիում անցկացվեց վրացական երգի մրցույթ-փառատոն **«Այլ Վրաստան որտեղ կա»**, որտեղ Քվեմո Քարթլիի տարածաշրջանում բնակվող 6-ից մինչև 17 տարեկան տարիքի վրացի և տարբեր էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ դեռահասները կատարեցին վրացական ակադեմիական էստրադային երգեր:
- **Նախագիծ. «Վրացիների և օսերի բարեկամությունը»** - «Միջազգային հասարակություն Կովկասյան խճանկար»-ը իրականացրեց նախագիծ **«Բաժանող գծի մերձակայքի գյուղի բնակչության համար ցուցահանդեսի կազմակերպում և մշակութային միջոցառման անցկացում»**, որի շրջանակներում Էրզնեթում կազմակերպվեց վրաց-օսական հարաբերություններն արտացոլող ֆոտո-ցուցահանդես, ինչպես նաև վրացի և օս նկարիչների աշխատանքների ցուցահանդես, տրվեց համերգ:
- Կայացավ վրաց պարարվեստի երախտավոր Օմար Խուբանի հոբելյանը և ստեղծագործական երեկոն:

Հաշվետու ժամանակաշրջանում Մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության կողմից Պանկիսի կիրճում իրականացվեցին հետևյալ միջոցառումները.

- «Մեր ժողովուրդը՝ վայնախներ» նախագծի շրջանակներում կազմակերպիչների կողմից Պանկիսում և Ջողոլոյում ընտրված ստեղծագործական խմբերի կողմից, Թբիլիսիում, Կոտե Մարջանիշվիլի անվան պետական դրամատիկական թատրոնում կայացավ ցուցահանդես և համերգ:
- «Կովկասյան մշակույթի փառատոն Պանկիսում» նախագծի նպատակը վայնախական մշակույթի ժողովրդականացումը և աջակցությունն է,
- «Ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության ժողովրդականացում» - աջակցություն Թուշեթում և Պանկիսի կիրճում կարևոր հիմնախնդիրների կարգավորմանը, վայնախական մշակույթի ժողովրդականացում, տեղի ունեցավ համատեղ ազգագրական համերգ թուշեթի և վայնախների մասնակցությամբ:
- 2016 թվականի մայիսի 21-ին Դուխի գյուղում նշվեց մշակութային բազմազանության օրը: Անցկացվեցին տարբեր միջոցառումներ: Կազմակերպվեց թանգարանային ցուցանմուշների և ավանդական ձեռքի աշխատանքների ցուցահանդես: Կայացավ Բաղաթեր Արաբուլիի «Խեվտուրական սագա» գրքի շնորհանդեսը, տեղի ունեցավ տոնական համերգ տեղական ազգագրական համույթների, ՀԻԻԱ Գորիի Գ.Էրիսթավիլի անվան պրոֆեսիոնալ դրամատիկական թատրոնի դերասանների մասնակցությամբ,
- «Պանկիսի կիրճ և քիստական պարի երախտավոր» - նշված վերնագրով լույս տեսավ ալբոմ, որը ծառայում է տեղական պարի, ավանդույթների պահպանությանը, ներկայացմանը և ժողովրդականացմանը:
- «Ֆոտո-դպրոց»-ը նախատեսում է տեղացի երեխաների համար ֆոտո-արվեստի տիրապետում: Նախագծի վերջում կայացավ հանրագումարող ֆոտո-ցուցահանդես:
- «Վայնախական արվեստ» ալբոմի հրատարակություն – քարտարանում կուտակված է տեղեկատվություն վայնախական արվեստի նմուշների, վայնախյան ավանդական մշակույթի, կիրառական-դեկորատիվ արվեստի, հնագույն արհեստների տեխնոլոգիաների և վարպետների մասին,
- Տպագրության պատրաստվեց վայնախական մանկական հեքիաթներ վրացերեն լեզվով, որը ծառայում է հնագույն վայնախական հեքիաթների, ավանդույթների և կենցաղային մշակույթի ժողովրդականացմանը:
- Տեղի ունեցան ՀԻԻԱ Նոդար Դումբաձեի անվան պատանի հանդիսատեսի թատրոնի հյուրախաղերը Պանկիսի գյուղերում (Դուխի, Օմալո, Ջողոլո),
- ՀԻԻԱ «Սովերների թատրոնի» հյուրախաղը Դուխի գյուղում («Չորս եղանական» ներկայացում),
- Ազգագրական մանկական համույթ «Սիին Սիզլային» օժանդակեցին բեմական հագուստով և տեխնիկական սարքավորանքով:

Սամցխե-Ջավախեթի պետական լիազոր-նահանգապետի վարչությունը ակտիվորեն է ընդգրկված այն միջոցառումների կազմակերպման մեջ, որոնք օժանդակում են էթնիկ

փոքրամասնությունների մշակույթի և ինքնագոյի պահպանմանը: Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող վարչական միավորումներում գործում են ակումբային հիմնարկություններ, որտեղ ստեղծված են երգի և պարի համույթներ: Ախալքալաքում և Նինոծմինդայում ակտիվորեն գործում են երաժշտական և նկարչական դպրոցներ: Դրա հետ միասին, մշակութային ավանդույթների պաշտպանության նպատակով տեղական բյուջեներից իրականացվում է տարբեր մշակութային օբյեկտների ֆինանսական աջակցություն և մշակութային միջոցառումների ֆինանսավորում: Սամցխե-Ջավախեթի 7 մունիցիպալիտետներում գործում է 183 մշակութային հիմնարկություն, ինչպես նաև 11 նկարչական և երաժշտական դպրոց:

Կախեթի տարածաշրջանում պետական լիազոր-նահանգապետի վարչության կողմից իրականացված գործունեություն

Կախեթի տարածաշրջանի մունիցիպալիտետների տեղական բյուջեից էթնիկ փոքրամասնություններով բնակվող գյուղերում ֆինանսավորվեցին տարբեր ենթակառուցվածքային նախագծեր: Նախագծերի հանրագումարային արժեքը կազմեց 450 000 լարի, ինչպես նաև մունիցիպալիտետների սոցիալական օգնության ծրագրի տարբեր հոդվածներից տրվեց 150 000 լարիից ավելի: Կախեթի տարածաշրջանում տարվա ընթացքում անցկացվեց շուրջ 35 տարբեր մշակութային միջոցառում:

Հաշվետու ժամանակաընթացքում, գյուղական գրադարաններում (Ջողոլո, Քվեմո Խալաձանի) լրացվեց գրքային ֆոնդը մունիցիպալային-կենտրոնական գրադարանի գրքային ֆոնդի հաշվին, իսկ Դուխսի գյուղական գրադարանին վերականգնվեց կարգավիճակը:

- Պանկիսի ազգագրական թանգարանին ավելացվեց 15 թանգարանային ցուցանմուշ, հիմնականում բնակչության նվիրատվությունների հաշվին,
- Մունիցիպալային բյուջեից հատկացվեց գումար դրոշմային դազգահ ձեռք բերելու համար,
- Ախմետայի մունիցիպալիտետի արվեստա-ճանաչողական դպրոցի բազայի վրա Ջողոլո գյուղում բացվեց արվեստա-ճանաչողական դպրոցի մասնաճյուղ: Մասնավորապես, կիրառական արվեստի խմբակ, որտեղ սովորում է 27 երեխա:
- Պանկիսի կիրճում, մասնավորապես Դուխսում գործում է մեկ երաժշտական դպրոց (հաշվվում է 7 երեխա, զբաղված է երկու աշխատակից):

2016 թվականի ընթացքում Վրաստանի **պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարության քրեա-կատարողական հիմնարկություններում** ակտիվորեն ընթանում էին տարբեր մշակութային-ճանաչողական և սպորտային միջոցառումներ: Միջոցառումներին ակտիվորեն ընդգրկված էին էթնիկ փոքրամասնություններին պատկանող դատապարտյալները: Սահմանված պրակտիկայի համաձայն, հաշվետու ժամանակաշրջանում, քրեա-կատարողական հիմնարկություններում ամիսը երկու անգամ տեղի էին ունենում տեղեկատվական հանդիպումներ:

Հատկանշական է, որ յուրաքանչյուր քրեա-կատարողական հիմնարկությունում գոյություն ունի սենյակ, որտեղ տարբեր դավանանքի ներկայացուցիչները հանդիպում են իրենց հոգևոր

հայրերին և անց են կացնում ծիսական արարողություններ: Նույնպես կանանց թիվ 5 քրեա-կատարողական հիմնարկությունում Իսլամի հետևորդներ մեղադրյալ/դատապարտյալների համար գործում է կրոնական արարողությունների հատուկ սենյակ:

Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի կողմից իրականացված գործունեություն

Հաշվետու ժամանակաշրջանում Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանը ակտիվորեն համագործակցում էր Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի, Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմին կից գործող Հանդուրժողականության կենտրոնի, Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների համայնքների հետ:

Գործընկեր կազմակերպությունների հետ սերտ համագործակության արդյունքում, 2016 թվականին ազգային գրադարանում անցկացվեց 4 միջոցառում: Այդ թվում գեղանկարչական կտավների և ֆոտո ցուցահանդեսներ, համերգներ, գրքերի շնորհանդեսներ: Ազգային գրադարանի բառարանների միասնական բազայում տեղադրվեցին ուկրաինա-վրացական, արխազ-վրացական, ռուս-վրացական, հայ-վրացական և վրաց-օսական բառարանները: Վերոնշյալ միջոցառումների նպատակն էր Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների մշակութային ժառանգության, արվեստի և ավանդույթների ժողովրդականացումը:

Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի կողմից իրականացվեցին հետևյալ միջոցառումները.

- Սերգո Փարաջանովի 92-ամյա հոբելյանին նվիրված միջոցառում. Յուրի Մեչիթովի լուսանկարների ցուցահանդես:
- Ադրբեջանական պոեզիայի և երաժշտության երեկո,
- Վրաց և ադրբեջանցի նկարիչների աշխատանքների համատեղ ցուցահանդես,
- Նախագիծ-էկվիլիբրիումի շրջանակներում Ախալքալաքի մունիցիպալիտետի Բավրա գյուղի հայկական հանրային դպրոցում ստեղծվեց վրացերեն գրադարան:

Ք.Թբիլիսիի մունիցիպալիտետի կողմից իրականացված գործունեություն

- 2016 թվականի մարտի 7-ին ք.Թբիլիսիի քաղաքապետարանի մշակութային քաղաքային ծառայության աջակցությամբ լույս տեսավ Վրաստանի ազգային գրադարանի ցուցահանդեսային սրահում անցկացված ցուցահանդեսի քարտարանը, որտեղ ներկայացված էին վրացի և ադրբեջանցի նկարիչների աշխատանքները:
- Անցած տարվա «Թբիլիսոբա» տոնի շրջանակներում, Աբանթուբանի տարածքում ներկայացված էր ադրբեջանական անկյուն, որտեղ կազմակերպվեց ազգագրական համույթների, երգիչների և պարողների ներկայացումներ, ազգային ճաշատեսակների և հրուշակեղենի ցուցահանդես:
- Մուշտախի գրոսայգում, ք.Թբիլիսիի քաղաքապետարանի Ո(Ո)ԻԱ «Մշակութային միջոցառումների կենտրոնի» ֆինանսական աջակցությամբ և «Վրաստանի կանանց

խորհրդի» կազմակերպմամբ անցկացվեց միջոցառում «Ժողովուրդների բարեկամության պատմություններ», որը նվիրվեց Մուշտախի գրոսայգու հիմնադրման պատմությանը: Միջոցառմանը մասնակցում էին Թբիլիսիում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ստեղծագործական խմբերը և արվեստագետները, այդ թվում. օսեր, արխագներ, ռուսներ, ուկրաինացիներ, ադրբեջանցիներ, լեհեր, գերմանացիներ և չեխեր:

Ք.Թբիլիսիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կրթության, սպորտի և երիտասարդության գործերի քաղաքային ծառայության Ո(Ո)ԻԱ «Թբիլիսիի երիտասարդական կենտրոնների միավորումը» «Քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարության 2015-2020 թթ. գործնական պլանի» շրջանակներում իրականացնում է նախագիծ «Բարեկամության տուն», որի նպատակն է օժանդակել Թբիլիսիում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ինտեգրմանը: Հաշվետու ժամանակաընթացքում «Բարեկամության տանը» ինտենսիվորեն անց էին կացվում տարբեր տեսակի միջոցառումներ և հանդիպումներ:

Ք. Բաթումի մունիցիպալիտետի կողմից իրականացված գործունեություն

Հաշվետու ժամանակաընթացքում ք.Բաթումի մունիցիպալիտետի կողմից հիմնադրված Ո(Ո)ԻԱ «Բաթումի մշակույթի կենտրոնին» կից գործող «Բարեկամության տանը» անցկացվեցին հանդիպումներ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ: Նշված հանդիպումների ժամանակ քննարկվեցին ք. Բաթումի քաղաքապետարանի կողմից կրթության, առողջապահության, սոցիալական և գենդերային հավասարության թեմայով պլանավորված և իրականացված ծրագրերը:

Վրաստանի Սպորտի և երիտասարդության գործերով նախարարության կողմից իրականացված գործունեություն

Վրաստանում բնակվող «էթնիկ փոքրամասնությունների ինտեգրման աջակցության ծրագիրը» օժանդակում է երկրում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների զարգացմանը, նրանց շրջանում ակտիվ քաղաքացիության գաղափարի, պետական և ազատ մտածելակերպի ձևավորմանը: Իրականացվեցին մի շարք ծրագրեր և նախագծեր.

- Շարունակվեց աուդիո ներկայացումների բեմադրություն/ձայնագրությունը DVD սկավառակների վրա՝ Վաժա Փշավելայի «Հյուրն ու տանտերը» (վրացերեն, արխագերեն, օսերեն, ադրբեջաներեն, ռուսերեն լեզուներով), Ակակի Ծերեթելիի «Իմ դայակը» (վրացերեն և արխագերեն լեզուներով), Շոթա Ռուսթավելիի «Վագրենավորը» (վրացերեն, ադրբեջաներեն, հայերեն լեզուներով): Նշված DVD սկավառակները տարածվեցին Վրաստանի տարբեր տարածաշրջաններում,

- 2016 թվականին նախարարության կողմից ստեղծվեց գրական ժողովածու «Իմ հայրենիքը Վրաստանն է», որի միջոցով բացահայտվեցին Վրաստանում բնակվող պոեզիայի շնորհով աչքի ընկած էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդները, ժողովածուն հրատարակվեց նաև Բրայլի տառատեսակով,
- Ալպիական ճամբար - «Արշավ Ճառխում» ծրագրի շրջանակներում կազմակերպվեց Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների մասնակցությամբ արշավ՝ վրանային ճամբար «Ճառխի-2016»: Արշավը իրականացվեց առողջ կենսակերպի ժողովրդականացման նպատակով: Ճամբարին մասնակցում էին ադրբեջանցի և քիստ երիտասարդներ, իսկ կազմակերպիչներն էին վրացիները և հայերը, ովքեր համատեղ անցկացրեցին արշավի հինգ օրերը: Նախագծին մասնակցեցին 20 երիտասարդներ:
- «Ամառային արշավային ճամբար» նախագիծն իրականացվեց Խվամլեի լեռան վրա: Նախագիծը նպաստեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ և վրացի երիտասարդների միջև հարաբերությունների խորացմանը, մերձեցմանը և միմյանց մշակութային ավանդույթներին ծանոթանալուն: Հնէաբանական ճամբարի տևողությունը մեկ ամիս է և դրան ամեն տարի ընդգրկվում է 50 երիտասարդ:
- Տարհանվածների միջազգային օրվա կապակցությամբ Պանկիսի կիրճում կազմակերպվեցին մշակութային, կրթական և սպորտային մրցաշարեր սպորտի 8 տեսակից. բասկետբոլ, ֆուտբոլ, ըմբշամարտ, սեղանի թենիս, վազք, բազկամարտ, ձիարշավ, տամայախաղ (աղջիկների շրջանում): Սպորտի և երիտասարդության գործերով նախարարը մարզական գույք փոխանցեց նորացված ձյուդոյի դահլիճում վարժվող 100 երիտասարդի:
- 2016 թվականի ընթացքում Պանկիսի կիրճի Դուխի գյուղում բնակվող 150 երիտասարդների համար ընթանում էր մարզական ուսուցում ձյուդոյից:
- Սպորտի և երիտասարդության գործերով նախարարության ՀԻԻԱ «Երեխաների և երիտասարդության ազգային կենտրոնի» սահմանափակ կարողություններով, բռնի տեղաշարժված և առանձնահատուկ կարիքներ ունեցող անձանց ինտեգրման ծրագրերի ղեկարարամենտը, «Երիտասարդական փառատոն-2016» ծրագրի շրջանակներում իրականացնում էր „CYNC շաբաթ Գորիում» և «CYNC շաբաթ Պանկիսում» նախագիծը, որը նախատեսում էր Ջողոլոյում, Բիրկիանում, Դուխում, Ախմետայում, Գորիում, Շավշվեբում, Խուրվալեթում, Կարալեթում, Տինիսիիդում, Սկրայում, Վարիանում, Բերբուկում և Վերխվեբի բնակավայրում բնակվող աշակերտների, հատկապես առանձնահատուկ կարիքներ ունեցող և սահմանափակ կարողություններով անձանց, ինչպես նաև էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկումը ոչձևական կրթական ակտիվությունում և աջակցությունը նրանց հասարակությանը ինտեգրմանը, դեռահասների մոտ քաղաքացիական գիտակցության բարձրացմանը, լիդերության և թիմային ունակություն-հմտությունների մշակմանը: Ենթանախագծերում ընդգրկված էին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներ Պանկիսի կիրճից և Գորիի

մերձակա բնակավայրերից: Նախագծում ընդգրկվեցին 13-16 տարեկան հասակի 70 աշակերտ:

Պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարության քրեա-կատարողական հիմնարկություններում գտնվող բոլոր դատապարտյալներն իրավունք ունեն, առանց խտրականության նրանց էթնիկ ծագման, մասնակցություն ունենալ մշակութային և մարզական միջոցառումներին: 2016 թվականի հունվարից մինչև օրս քրեա-կատարողական հիմնարկություններում անցկացվեց 254 մշակութային և 39 սպորտային միջոցառում:

V. Եվրոինտեգրման գործընթացի մասին տեղեկատվական/զիտակցության բարձրացման ընթացակարգ

Պետական նախարարի աշխատակազմը, եվրոպական և եվրատլանտյան կառուցվածքներին ինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի հետ համագործակցությամբ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար իրականացնում է տեղեկատվական ընթացակարգ Վրաստանի եվրոինտեգրման գործընթացի և դրանից բխող շահի մասին:

- Տեղի ունեցավ բազում հանդիպում-բանավեճ եվրոինտեգրման հարցերով, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջաններում: Թբիլիսի, Քվեմո Քարթլի (Մառնեուլի, Դմանիսի, Ծալկա), Սամցխե-Ջավախեթի (Ախալքալաքի, Ախալցխի, Նինոծմինդա), Կախեթի (Պանկիսի կիրճ) տարբեր թիրախային խմբերի, ուսանողների և բարձրդասարանցիների, ոչկառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների, ֆերմերների, ինչպես նաև տարածաշրջանային մեդիայի ներկայացուցիչների հետ:
- Տարվա ընթացքում, պատրաստվեցին տեղեկատվական նյութեր Վրաստանի Եվրամիությունում անայցեգրային պայմանակարգի մասին վրացերեն, աբխազերեն, օսերեն, ռուսերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով: Տեղեկատվական նյութերը հայերեն, ադրբեջաներեն, ռուսերեն և վրացերեն լեզուներով տարածվեցին Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի տարածաշրջաններում:
- Հաշվետու ժամանակաշրջանում պատրաստվեցին տեղեկատվական բնույթի տեսահոլովակներ եվրոինտեգրման թեմայով (DCFTA-ի և կրթության միջազգային ծրագրերի մասին) աբխազերեն, օսերեն, ադրբեջաներեն, հայերեն լեզուներով: Տեսահոլովակները տեղադրվեցին պետական նախարարի աշխատակազմի կայք-էջի վրա և սոցիալական ցանցում (Facebook): Դրա հետ միասին, իրականացավ շնորհանդես էթնիկ փոքրամասնությունների, դիվանագիտական կորպուսի, միջազգային կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման և ոչկառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:
- Երկրամասային վարչությունների աջակցությամբ, քննությունների ազգային կենտրոնի, ներքին գործերի նախարարության ոստիկանության և ՀԻԻԱ Դավիթ

Աղմաշենեբելիի անվան ազգային պաշտպանության ակադեմիաների մասնակցությամբ ք. Ախալցխեում և ք.Մառնեուլիում տեղի ունեցան տեղեկատվական հանդիպումներ տեղական երիտասարդների հետ: Նրանց մատուցվեց լրատվություն կրթության համակարգում առկա նորույթների մասին, այդ թվում նաև այն հնարավորությունների մասին, որոնք եվրոինտեգրման գործընթացը կրթության ոլորտում առաջարկում է երիտասարդներին:

- Նույնպես, գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ, Կախեթի տարածաշրջանում, Սագարեջոյում տեղի ունեցավ հանդիպում տեղական ֆերմերների հետ եվրոինտեգրման գործընթացում գյուղատնտեսության ուղղությամբ երկրում գոյություն ունեցող նորույթների, մասնավորապես, գյուղատնտեսական համայնատիրությունների զարգացման հետ կապված դրական փոփոխությունների վերաբերյալ:
-

VI. Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի իրականացրած գործունեություն

Հաշվետու ժամանակաընթացքում պետական նախարարի աշխատակազմի կողմից իրականացված միջոցառումներն են.

- Աղբբեջաներեն և հայերեն լեզվի և գրականության ուսուցիչների համար մայրենի լեզվի միջազգային օրվան նվիրված տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն,
- Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանում կայացավ չեչեն և ինգուշ ժողովուրդների բռնի արտաքսման 72-րդ տարելիցին նվիրված հիշատակի երեկո: Միջոցառմանը ներկա էին տարբեր գիտական շրջանների ներկայացուցիչներ, հասարակական գործիչներ, Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներ և Պանկիսի կիրճից ժամանած հյուրեր:
- Անցկացվեց Վրաստանի անկախության օրվան նվիրված համերգ: Միջոցառմանը մասնակցում էին երիտասարդներ Թբիլիսիից, Սամցխե-Ջավախեթից, Քվեմո-Քարթլիից, Շիդա Քարթլիից և Կախեթից,
- Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանում կայացավ Կովկասյան ժողովուրդների մուհաջիրության օրվան նվիրված հանդիպում,
- Աշխատակազմի կազմակերպմամբ ք.Գորիում և ք. Բաթումում անցկացվեց բազմազգ ժողովուրդների փառատոն «Մեկ երկրնքի տակ-մշակույթների երկխոսություն», որը 2010 թվականից անց է կացվում և դրան ընդգրկված են Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ շնորհալի երիտասարդները: Փառատոնի համակազմակերպիչներն են. Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության, Սպորտի և երիտասարդության գործերով նախարարությունները և տեղական ինքնավարությունները. փառատոնին աջակցում է Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիան,

- Հանդուրժողականության միջազգային օրվան նվիրված շաբաթի շրջանակներում պետական նախարարի աշխատակազմը անցկացրեց դասախոսություն/սեմինարներ Թբիլիսիի և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում ուսանող-երիտասարդների հետ, շաբաթի շրջանակներում աշխատակազմի կազմակերպմամբ և Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի ֆինանսական աջակցությամբ անցկացվեց ֆոտո-մրցույթ «Մեր բազմերանգ հայրենիքը», մրցույթում հաղթանակած 13 մասնակցի տրվեցին արժեքավոր նվերներ, շաբաթվա շրջանակներում անցկացվեց պետական նախարարի պաշտոնական ընդունելությունը, որտեղ հրավիրված էին էթնիկ փոքրամասնությունների, դիվանագիտական կորպուսի, միջազգային կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման և ոչկառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ:
- Անցկացվեցին հանդիպումներ Ղվարելի մունիցիպալիտետի Թիվի, Չանտլիսդուրի և Սարուսո գյուղերի, ինչպես նաև Թելավի մունիցիպալիտետի Ղարաջալա գյուղի հանրային դպրոցների առաջինդասարանցիների, Ախմետայի մունիցիպալիտետի Կասրիսոդալի գյուղի հանրային դպրոցի աշակերտների հետ: Աշխատակազմի աշխատակիցները երեխաներին ծանոթացրին ազգագրական-ճանաչողական բնույթի մանկական գրականության հետ: Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի աջակցությամբ դպրոցի գրադարաններին գրքեր նվիրեցին, իսկ աշակերտներին՝ գրասենյակային իրերի հավաքածու:
- Տարվա ընթացքում Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմը շնորհավորում էր ազգային և կրոնական տոները Վրաստանում բնակվող էթնիկ և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներին ինչպես բնակչությանը, այնպես էլ դիվանագիտական կորպուսին:

VII. Միջազգային պարտավորությունների կատարում

Վրաստանը տարբեր միջազգային գործիքների շրջանակներում, էթնիկ փոքրամասնությունների պաշտպանության տեսանկյունից կատարում է միջազգային պարտականությունները.

- Ռասայական խտրականությունը վերացնելու կոմիտեին ներկայացվեց խտրականությունը արմատախիլ անելու մասին կոնվենցիայի կատարման հաշվետվություն, որի քննարկումը տեղի ունեցավ 2016 թվականի մայիսի 1-2-ին,
- Խորհրդատուների կոմիտեն, անցյալ տարվա հունվարին հրապարակեց Վրաստանի կողմից ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի կատարման մասին երկրորդ պարբերական հաշվետվությունը:

Նշված հաշվետվություններում ամրագրված է պետության կողմից ձեռք բերված առաջընթացը և նաև մարտահրավերները էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ:

2016 թվականի գործնական պլանի իրականացման գործընթացում պետական նախարարի աշխատակազմը ակտիվորեն համագործակցում էր քաղաքացիական սեկտորի, միջազգային կազմակերպությունների, երկրում լիազորագրված դիվանագիտական կորպուսի, տեղական և միջազգային փորձագետների, ժողովրդական պաշտպանի աշխատակազմին կից գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի հետ: Բացի դրանից, պետական նախարարի աշխատակազմը մշտական հաղորդակցություն ուներ էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջանների բնակչության, տեղական ինքնակառավարման և ոչկառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Միաժամանակ, պետական նախարարի ներկայացուցիչները էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջաններում համակարգում են աշխատակազմի գործունեությունը Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջաններում:

2016 թվականի գործնական պլանով նախատեսված ակտիվությունների, միջոցառումների և նախագծերի իրականացման նպատակով պետական նախարարի աշխատակազմի աջակցությունը իրականացվում էր ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության (USAID) և Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի (UNAG) «Հանդուրժողականության, քաղաքացիական գիտակցության և ինտեգրման աջակցության ծրագրի» շրջանակներում: